



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ





ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ



**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ3

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ5

ԳԼՈՒԽ 1.....8

ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ8

 1.1 ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ9

 1.2. ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....13

ԳԼՈՒԽ 2.18

ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ18

 2.1 ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ18

 2.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ, ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԱՆ20

 2.4 ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍ.....72

 2.5 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԻՄՔ.....78

ԳԼՈՒԽ 3.....84

 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ84

 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....123

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ջուրը կյանքի աղբյուր է, մաքուր ջուրը և սանիտացիայի պահպանումը՝ կարևոր երաշխիք առողջության պահպանման համար: Ջրի և սանիտացիայի հասանելիության ապահովումն այն առաջնային հարցերից է, որը դրված է բազմաթիվ պետությունների և միջազգային կազմակերպությունների քննարկման սեղանին: Վերջինի խոսույն փաստը «Կայուն զարգացման 2030 օրակարգն» է, որն ընդունվել է աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015 թվականի սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի գագաթնաժողովի ժամանակ: Օրակարգում ներառված 17 նպատակներում անմասն չեն մնացել նաև այնպիսի հարցեր, որոնք անդրադառնում են ջրի և սանիտացիայի հասանելիության խնդրին: Մասնավորապես, «Օրակարգ 2030»-ով նպատակ է դրված բոլորի համար ապահովել ջրի ու սանիտարական պայմանների հասանելիությունը և վերջիններիս կայուն ձևով կառավարումը, այդ ճանապարհին լուծելով անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր, հավասար հասանելիությունից ընդհուպ մինչև բոլորի համար համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման և ջրամատակարարման ու ջրահեռացման կառավարման բարելավման ոլորտներում առկա խնդիրները¹:

Հայաստանի Հանրապետությունում ևս առկա են ջրի և սանիտացիոն հասանելիության հետ կապված խնդիրներ և «Օրակարգ 2030»-ով սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համապատասխան քայլերի իրականացում՝ առկա խնդիրների վերհանում և դրանց լուծելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում²:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ սահմանադրական օրենքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է վերապահել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի, ինչպես նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև երեխաների իրավունքների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության իրականացումը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ երեխայի օրվա մեծ մասն անցնում է հանրակրթական կամ նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ 2018 թվականին մշտադիտարկման աշխատանքներ են իրականացվել այդ հաստատություններում՝ ջրի և սանիտացիայի հասանելիության առկա վիճակին, բացերին, խնդիրներին և առաջնահերթություններին ծանոթանալու համար:

Երեխաները, կապված իրենց տարիքի և իրավունակության հետ՝ ունեն հատուկ վերաբերմունքի կարիք, իսկ նրանց իրավունքների իրացման ապահովումն ունի հիմնարար

¹ <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6>

² <http://un.am/up/file/SDG6-CleanWater.pdf>

նշանակություն: Միջազգային բազմաթիվ փաստաթղթեր նվիրված են երեխայի իրավունքներին և ազատություններին, կոչված են երեխային առավել ապահով և պաշտպանված դարձնելուն:

Ջրի և սանիտացիայի հասանելիությունը երեխաների առողջության, հիգիենայի կանոնների պահպանման կարևորագույն առավատչյան է: Համապատասխան գիտելիքների ստացումը և իրազեկվածության բարձր մակարդակն իրենց հերթին պետք է լինեն ջրի և սանիտացիայի իրավունքի իրացման գրավականներից մեկը:

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման ընթացքում հաճախ են եղել դեպքեր, երբ հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիություն ապահովված չի եղել: Այս պարագայում հարկ է նկատել, որ կրթական հաստատություններում ջրի և սանիտացիայի անհասանելիությունն և անմատչելիությունը կարող են բացասական ազդեցություն ունենալ երեխայի առողջության պահպանման, զարգացման, աշխարհընկալման, հիգիենիկ դաստիարակության, ինչպես նաև կրթական առաջադիմության վրա:

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են ոչ միայն երեխաների իրավունքների պահպանման, այլ նաև ուսումնական հաստատությունների աշխատակիցների, վարչակազմի աշխատանքային իրավունքների վիճակը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը հիմնված է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, հետազոտական և կրթական կենտրոնի մասնագետների, ինչպես նաև ջրի և սանիտացիայի ոլորտի մասնագետ-փորձագետների կողմից ոլորտի օրենսդրության, միջազգային չափանիշների ուսումնասիրության, 2018 թվականի ընթացքում նախադպրոցական ու հանրակրթական ուսումնական հաստատություններ իրականացված մշտադիտարկման այցերի և Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքների վրա: Զեկույցը կազմելիս ուսումնասիրվել են նաև ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից վերհանված խնդիրները և զանգվածային լրատվության միջոցների հրապարակած նյութերն ու ուսումնասիրությունները:

Ոլորտի վերաբերյալ նոր գիտելիքների և հմտությունների ձեռք բերման համար 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները Ժնևում մասնակցել են «Մարդու իրավունքները և ջրի կառավարումը» թեմայով՝ հատուկ դասընթացի: Դասընթացը կազմակերպվել է Վոթերլեքս (WaterLex³) միջազգային կազմակերպության կողմից: Զրային կառավարման համար մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտների նախաձեռնությունը նպատակ ունի զարգացնել նշված ինստիտուտների կարողությունները ջրային կառավարման մշտադիտարկման պատշաճ իրականացման համար: Տարբեր քայլերի ձեռնարկմամբ՝ կազմակերպությունը նպատակ է հետապնդում ուժեղացնել մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտների կարողությունները ջրային իրավունքի և փոխկապակցված այլ իրավունքների պահպանության, պաշտպանության և արդյունավետ իրականացման համար: Վերապատրաստումը հատուկ ծրագրված էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Վրաստանի հանրային պաշտպանի աշխատակազմերի կարողությունների զարգացման համար:

«Կայուն զարգացման նպատակների իրականացման աջակցություն, ջրի և սանիտարական պայմանների առկայությունը՝ որպես մարդու իրավունք» ծրագրի շրջանակում նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրամատակարարման և սանիտարական ծառայությունների հասանելիության մշտադիտարկում իրականացնելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների և փորձագետների կողմից մշակվել է հստակ մեթոդաբանություն:

³ «Վոթերլեքս» կազմակերպությունը ոչ առևտրային, հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2010 թվականին և գրանցված է Շվեյցարիայում: Վերջինս ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում ունի հատուկ խորհրդակցական գործառույթներ իրականացնելու կարգավիճակ և ՄԱԿ-ի «Զրային ոլորտում գործընկերոջ» հատուկ կարգավիճակ: Կազմակերպությունը 2013 թվականից աշխատում է մարդու իրավունքների ազգային ինստիտուտների հետ «Զրային ոլորտում նախաձեռնություններ» ձեռնարկման ծրագրի շրջանակներում: <https://www.waterlex.org/>

Այսպես, փորձագետների կողմից նախապես մշակվել են հատուկ հարցաշարեր, իսկ այցերը եղել են չհայտարարված: Ընդ որում, կազմվել են առանձին երկուական հարցաշարեր և՛ նախադպրոցական, և՛ հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկում իրականացնելու համար՝ հիմք ընդունելով ներպետական օրենսդրությամբ ամրագրված ջրամատակարարման և սանիտարական կանոնների վերաբերյալ ներկայացվող պահանջները, միջազգային չափանիշները և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները: Ավելին, հարցաշարերում ներառվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական բաղադրիչ պարունակող հարցեր:

Առաջին հարցաշարում զետեղված հարցերը տրվել են հաստատության անձնակազմին (օրինակ՝ տնօրենին, փոխտնօրենին), որոնք վերաբերվել են հաստատության շենքի՝ շուրջօրյա խմելու-տնտեսական հոսող ջրով ապահովված լինելու, մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ բողոքների առկայության մասին և այլն:

Երկրորդ հարցաշարում արտացոլված հարցերը լրացվել են փորձագետների և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից՝ սանհանգույցներում ջրի հասանելիության և սանիտարական պայմանները ստուգելու միջոցով: Տվյալ հարցաշարում տեղ են գտել այնպիսի հարցեր, ինչպիսիք են օրինակ՝ հաստատությունում տեղակայված աղջիկների և տղաների համար նախատեսված առանձին սանհանգույցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար հարմարեցված սանհանգույցների առկայությունը և այլն:

Այցերի ընթացքում հատուկ ուսումնասիրության են ենթարկվել ջրի և սանիտարական ծառայություններից օգտվելու կանոնները: Մասնավորապես, մշտադիտարկման արդյունքում ճշտվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում ջուր խմելու համար նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակների առկայությունը, իսկ նախադպրոցական հաստատություններում՝ առկա բաժակների անհատականացված լինելը կամ չլինելը, միևնույն ժամանակ տեղեկություններ են հավաքվել հաստատություններում սովորողների առանձին խմբերի և անցկացվել են առանձնազրույցներ ինչպես ուսումնական հաստատության անձնակազմի, այնպես էլ երեխաների հետ: Սույն զեկույցում տեղ են գտել նաև պետական իրավասու մարմիններ ուղարկված հարցումների արդյունքում ստացված տվյալներ:

Այցերի ընթացքում ձեռք բերված տեղեկությունների, փաստաթղթերի և ոլորտի օրենսդրական կարգավորումների համադրման և վերլուծության արդյունքում վեր են հանվել ինչպես գործնական խնդիրներ, այնպես էլ օրենսդրական կարգավորման բացեր և թերություններ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններն ընտրվել են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգից (www.emis.am)՝ պատահականության սկզբունքով: Նշյալ համակարգում դպրոցները դասակարգված են՝ ըստ երեք կատեգորիայի՝ 1. ենթական է հիմնանորոգման, 2. ընթացիկ նորոգման կարիք ունի, 3. գտնվում է բավարար

վիճակում: Ըստ այդմ, այցերն իրականացվել են ինչպես հիմնանորոգման և ընթացիկ նորոգման կարիք ունեցող, այնպես էլ բավարար վիճակում գտնվող հաստատություններ:

Այսպիսով, 2018 թվականի մայիս-հունիս ամիսներին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են իրականացրել Երևանի և մարզերի 201 ուսումնական և նախակրթական ուսումնական հաստատություն՝ 121 դպրոց և 80 մանկապարտեզ (տե՛ս նաև Աղյուսակներ 1-2, 56-57):

Այցերի ընթացքում հաստատության անձնակազմին ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը, ինչպես նաև իրականացվող հետազոտության էությունը և նպատակը:

Մշտադիտարկման աշխատանքներ են իրականացվել թե՛ փոքրաքանակ և թե՛ մեծաքանակ աշակերտներ ունեցող հաստատություններում (օրինակ՝ ծրագրի շրջանակում մշտադիտարկում է իրականացվել 50 աշակերտ ունեցող հաստատությունում):

Այցերի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել երեխաների շրջանում սանիտարական ծառայություններից օգտվելու կանոնների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ անցկացնելու պրակտիկային: Մասնավորապես, հաստատության անձնակազմի կողմից հիգիենայի պահպանման և սանիտարական ծառայություններից օգտվելու վերաբերյալ երեխաների իրազեկման աշխատանքներ կատարելու վերաբերյալ տեղեկությունների ստացման համար համապատասխան հարցեր են առաջադրվել ինչպես հաստատության վարչակազմին, այնպես էլ՝ երեխաներին:

Այցերի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները սանիտարական պայմաններն արձանագրելու նպատակով իրականացրել են նաև լուսանկարահանումներ, որոնցում արտացոլվում են ինչպես մշտադիտարկմամբ վեր հանված դրական, այնպես էլ բացասական արդյունքները:

Այցի ավարտին վեր հանված խնդիրները քննարկվել են ուսումնական հաստատության տնօրինության հետ, որպեսզի վերջիններս հնարավորության դեպքում կարողանան շտկել դրանք: Արձանագրվել են նաև տնօրինության կողմից բարձրացված խնդիրները և կարիքները:

Սույն զեկույցում համակարգված կերպով ներկայացված են մշտադիտարկման աշխատանքների ընթացքում վեր հանված խնդիրները, դրանց կապակցությամբ կատարված մասնագիտական վերլուծություններն ու լուծմանն ուղղված առաջարկները:

ԳԼՈՒԽ 1.

ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 հանձնարարականով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչվեց որպես մարդու իրավունք և ընդունվեց այն, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար⁴: Ջուրը մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիք է: Ջուրը մարդու արժանապատիվ կյանքի իրավունքի իրացման անփոխարինելի գործոններից մեկն է⁵:

Ջուրը նաև կայուն զարգացման հիմքն է: Ըստ այդմ, ջրի հասանելիությունը և ջրային ռեսուրսների պահպանումն իր արտացոլումն է գտել Կայուն զարգացման նպատակներում: Մասնավորապես, Կայուն զարգացման 6-րդ նպատակն է ապահովել հասանելիություն և կայուն ձևով կառավարել ջուրն ու սանիտարական պայմանները բոլորի համար: Կայուն զարգացման նպատակներին համապատասխան նախատեսվել են նաև թիրախներ, որոնք պետությունների համար հիմնարար են և ըստ այդմ՝ քաղաքականության մշակումը և ծրագրերի իրականացումը պետք է ուղղված լինեն այդ թիրախների իրագործմանը⁶: Ջրային ռեսուրսները և դրանցով տրամադրվող ծառայությունները աղքատության կրճատման, տնտեսական աճի և շրջակա միջավայրի կայունության հիմք են:

Ջրի և սանիտացիայի հասանելիության երեխայի իրավունքն ուղղակիորեն սահմանված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով⁷:

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի երկրորդ մասի «գ» և «ե» կետերի համաձայն՝ մասնակից պետությունները անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկեն հիվանդությունների և թերսնման դեմ պայքարելու համար, այդ թվում՝ առաջնային առողջապահության շրջանակներում, ի թիվս այլնի՝ մատչելի տեխնոլոգիաների և բավականաչափ սննդարար մթերքների և խմելու մաքուր ջրի տրամադրման միջոցով՝ ուշադրության առնելով շրջակա միջավայրի աղտոտման վտանգավորությունն ու ռիսկը:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան: Երեխայի լավագույն շահի սկզբունքը վերջինիս իրավունքների հետ կապված հարցերում ելակետային նշանակություն ունի: Այն ամրագրված է նաև Երեխայի իրավունքների մասին

4 http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml

5 Տնտեսական, սոցիալային և մշակութային իրավունքների կոմիտեի Գլխավոր մեկնաբանություններ No 15, Ջրի իրավունք, E/C 12/2002/11 պարագրաֆ 1:

6 <http://un.am/hy/p/sustainable-development-goal-14>, <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6>, http://www.un.am/up/file/SDGs_Targets_Indicators_ARMENIAN_FINALIZED.pdf

7 Ընդունվել է 1989 թվականի նոյեմբերի 20-ին., ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ին:

կոնվենցիայի 3-րդ հոդվածում, իսկ երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերվող, և առհասարակ, երեխայի իրավունքներին առնչվող բոլոր օրենսդրական ակտերի հիմքում անվերապահորեն պետք է ընկած լինի երեխայի լավագույն շահը: Երեխայի լավագույն շահի սկզբունքի անշեղ պահպանումը կարևորագույն նշանակություն ունի երեխայի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Հարկ է նշել, որ պետության պարտականությունն է բոլոր դեպքերում ապահովել երեխայի լավագույն շահի պահպանումը և ստեղծել պայմաններ երեխայի իրավունքների պաշտպանության և իրացման համար: Երեխայի լավագույն շահերի ամրագրմամբ և այդ սկզբունքի պահպանմամբ է պայմանավորված նաև երեխայի կրթության և առողջության պահպանման իրավունքների իրացումը: Երեխայի իրավունքների իրացման հիմք նախապատրաստելու և յուրաքանչյուր պարագայում երեխայի շահերն առաջնահերթ համարելու պարագայում երեխան ինքն իրեն կզգա ոչ միայն պաշտպանության օբյեկտ, այլ իրավունքների կրող և իրացնող:

1.1 ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի շրջանակների ուրվագծման և առավել խորությամբ ընկալելի դարձնելու համար անհրաժեշտ է վեր հանել և վերլուծել մի շարք ելակետային դրույթներ: Դրանք հավասարության և խտրականության արգելքի, տեղեկատվության հասանելիության, մասնակցության (ներգրավվածության), հաշվետվողականության, կայուն զարգացման սկզբունքներն են, որոնք ծառայում են նաև որպես մարդու իրավունքների երաշխիքներ՝ հատուկ դեր կատարելով ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի իրացման համար:

Սկզբունք 1. Հավասարություն և խտրականության արգելք.

Ջրի և սանիտացիայի հասանելիության տեսանկյունից այս սկզբունքն իրենից ենթադրում է ինչպես խտրականության արգելքը, այնպես էլ՝ ջրի և սանիտարական ծառայությունների ստացման հավասարությունն ապահովելու պետության պարտականությունը: Հավասարության և խտրականության արգելքի սկզբունքի բացահայտումն իր հերթին պահանջում է մի շարք խնդիրների հասցեական անդրադարձ: Այսպես,

- արգելվում է անհատների կամ խմբերի նկատմամբ խտրականության դրսևորում՝ կախված ռասայից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, սեփականությունից, ծննդից կամ այլ կարգավիճակից⁸,

⁸ Տես, օրինակ Տնտեսական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ընդունված է 1966 թվականի դեկտեմբերի 16-ին, իրավական ուժ է ստացել 1976 թվականի հունվարի 3-ին) հոդված

- խտրականության դրսևորման յուրաքանչյուր դեպք պետք է գտնվի պետության հատուկ ուշադրության ներքո և վերջինս նման դեպքերի վերացման և խախտված իրավունքի վերականգնման ուղղությամբ պարտավոր է ձեռնարկել գործուն քայլեր: Այս առումով պետք է նկատի ունենալ, որ օրենսդրության որոշակի կարգավորումներ, լինելով չեզոք, կարող են ևս հազեցնել խտրականության,

- պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն անհավասարությունները նվազեցնելու ուղղությամբ՝ այդ կերպ ջրի և սանիտարական ծառայությունների հասանելիության հարցում բոլորի համար փաստացի հավասարություն ստեղծելու համար⁹,

- անկախ հողի սեփականության ձևից և սեփականատիրոջից՝ պետությունները պարտավոր են յուրաքանչյուրի համար ապահովել ջրի, սանիտարական ենթակառուցվածքների և ծառայությունների հասանելիություն¹⁰:

Ավելին, Կայուն զարգացման 6-րդ նպատակի թիրախները ևս միտված են հասանելիության տարբերության նվազեցմանը և հավասարության ապահովմանը: Մասնավորապես, սույն նպատակը՝ որպես թիրախ նախատեսում է մինչև 2030 թվականը ձեռք բերել անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր և հավասար հասանելիություն, համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմաններ բոլորի համար՝ վերջ դնելով բնական կարիքները դրսում հոգալուն, հատուկ ուշադրություն դարձնելով կանանց, աղքիկների և խոցելի իրավիճակներում գտնվողների կարիքներին¹¹:

Սկզբունք 2: Տեղեկատվության հասանելիություն.

Տեղեկատվության հասանելիության սկզբունքի էությունն այն է, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա հնարավորություն փնտրել և ստանալ ջրի և սանիտացիայի վերաբերյալ թե՛ գործող, թե՛ նախագծվող օրենսդրության, քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն: Պետությունները պետք է համապատասխան տեղեկատվությունը

2 (2)-ը և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ընդունված է 1966թվականի դեկտեմբերի 16-ին., իրավական ուժ է ստացել 1976 թվականի մարտի 23-ին) հոդված 2 (1)-ը:

⁹ Խոցելիության առումով ռիսկային են համարվում հետևյալ սոցիալական խմբերը՝ բնիկ ժողովուրդներ, քրջվոր կամ ճանապարհորդող խմբեր, ապաստան հայցողներ, տեղահանվածներ և վերաբնակեցվածներ, բնական աղետներից տուժածներ, ազատությունից զրկված անձինք, տարեցներ, հաշմանդամներ, քրոնիկ կամ ծանր հիվանդություններ ունեցողներ, երեխաներ, կանայք, տրանսգենդեր կամ միջսեռային անհատներ

¹⁰ Տե՛ս The human rights to water and sanitation in courts worldwide, a selection of national, regional and international case law, հասանելի է հետևյալ հղումով՝ https://hrbaportal.org/wp-content/files/Human-rights-to-water-and-sanitation-in-courts_WEB_2015.pdf:

¹¹ http://www.un.am/up/file/SDGs_Targets_Indicators_ARMENIAN_FINALIZED.pdf, <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6>

հասարակության համար դարձնեն հեշտ հասանելի¹², ընդ որում այնպիսի միջոցներով, որոնք կապահովեն տեղեկատվության հնարավորինս լայն տարածում¹³:

Հասանելիության մասին խոսելիս, պետք է նշել նաև, որ պետությունները պարտավոր են ձեռնարկել միջոցներ, որպեսզի այդ տեղեկատվության հասանելի լինի բոլորին՝ անկախ լեզվից, հաշմանդամություն ունենալու հանգամանքից և այլն¹⁴:

Եվ վերջապես, պետությունները պետք է ապահովեն, որպեսզի յուրաքանչյուր ոք հնարավորություն ունենա մասնակցել ջրի և սանիտացիայի թեմաներով տեղեկացվածության բարձրացման ծրագրերին և յուրաքանչյուրի համար այս ոլորտի կրթությունը դառնա հասանելի (օրինակ՝ հիգիենայի և առողջության և շրջակա միջավայրի նկատմամբ սանիտացիայի ազդեցության դասընթացներ)¹⁵:

Սկզբունք 3. Մասնակցություն (ներգրավվածություն).

Ներգրավվածությունը հնարավորություն է ստեղծում հաշվի առնել բոլորի կարիքները, ապահովում է գործընթացի ավելի արդյունավետ իրագործում, ինչն էլ, իր հերթին, բարելավում է դրա արդյունքների կայունությունը: Ելնելով նրանից, որ ջրի և սանիտացիայի իրավունքի հետ կապված ցանկացած որոշում կամ նախագիծ իր ազդեցությունն է ունենում մարդու մի շարք հիմնարար իրավունքների վրա՝ ապա անհրաժեշտ է ոլորտի յուրաքանչյուր նախաձեռնություն իրականացնել մասնակցային և թափանցիկ գործընթացի միջոցով:

Ավելին, Կայուն զարգացման 6-րդ նպատակի թիրախներից է նաև սատարել և ուժեղացնել տեղական համայնքների մասնակցությունը ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման բարելավմանը¹⁶:

Սկզբունք 4. Հաշվետվողականություն.

Ջրի և սանիտացիայի ծառայություններ մատուցող պետական և մասնավոր կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք ջրի և սանիտացիայի հասանելիության և դրանից բխող այլ իրավունքների ապահովման համար ջրօգտագործողների առջև պետք է հաշվետու լինեն: Նմանատիպ հաշվետվողականությունն ապահովելու համար

¹² UNHRC «Report of the Special Rapporteur on the Human Right to Safe Drinking Water and Sanitation» (2011) UN Doc A/HRC/18/33 (UNHRC Planning Report) [72].

¹³ UNHRC «Report of the Independent Expert on the Issue of Human Rights Obligations Related to Access to Safe Drinking Water and Sanitation, Catarina de Albuquerque» (2009) UN Doc A/HRC/12/24 (UNHRC Sanitation Report) [66].

¹⁴ St'u The human rights to water and sanitation in courts worldwide, a selection of national, regional and international case law, հասանելի է հետևյալ հղումով՝ https://hrbaportal.org/wp-content/files/Human-rights-to-water-and-sanitation-in-courts_WEB_2015.pdf:

¹⁵ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե «Ընդհանուր մեկնաբանություններ 15» (n 1) [26].

¹⁶ http://www.un.am/up/file/SDGs_Targets_Indicators_ARMENIAN_FINALIZED.pdf, <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6>

պետք է հաշվի առնել երկու պահանջ՝ *խախտված իրավունքը վերականգնելու արդյունավետ միջոցը և հսկողության պատասխանատվություն*:

Խախտված իրավունքը վերականգնելու արդյունավետ միջոց. այն անհատները և սոցիալական խմբերը, որոնք կարծում են, որ իրենց իրավունքները խախտվել են, սեփական բողոքները լսելի դարձնելու և լուծելու նպատակով պետք է հնարավորություն ունենան դիմել անկախ վերանայման մեխանիզմների և դատարաններ¹⁷:

Հսկողության պատասխանատվություն. այս դեպքում հարկավոր է քննարկել այնպիսի մեխանիզմների գործարկման անհրաժեշտությունը, որոնք ձևավորում են ջրի և սանիտացիայի տրամադրման հարցում մշտադիտարկման և հսկողության հնարավորություն՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր անձանց համար: Ջրի և սանիտացիայի համակարգում հաշվետվողականության գործիքակազմ ունենալու համար անհրաժեշտ է ներդնել հստակ ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Այս համակարգում ձեռնարկված քայլերը կամ ընդունված որոշումները պետք է հաշվետվողական բնույթի լինեն և կարգավորվեն համապատասխան հսկողական պատասխանատվության միջոցներով¹⁸:

Պետություններն ազատ են դելեգացնել ջրի և սանիտացիայի ծառայությունները մասնավոր օպերատորներին: Այս պարագայում պետք է միջոցներ ձեռնարկվեն անկախ մշտադիտարկման և խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ կառուցակարգերի ստեղծման համար՝ ապահովելով ոլորտի մասնավոր կազմակերպությունների կողմից ջրօգտագործողների և պետության առջև հաշվետվողականություն¹⁹:

Այս պարագայում հաշվետվողականության ապահովման տեսանկյունից կարևոր է մշտադիտարկման իրականացումը: Ըստ այդմ, պետությունները պարտավոր են ստեղծել արդյունավետ գործող մարմիններ և ընթացակարգեր՝ երաշխավորելու հանրային և մասնավոր ծառայություններ մատուցողների կողմից մարդու իրավունքների ապահովումը²⁰:

Սկզբունք 5. Կայուն զարգացում.

Ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքը պետք է իրականացվի ի բարօրություն ներկա և ապագա սերունդների²¹: Ջուրը որպես ռեսուրս պետք է լինի տնտեսական, շրջակա

¹⁷ Տե՛ս, C. de Albuquerque, V. Roaf, On the right track – Good practices in realising the rights to water and sanitation, p. 177, 2012, հասանելի է www.ohchr.org/EN/Issues/WaterAndSanitation/SRWater/Pages/SRWaterIndex.aspx.

¹⁸ Տե՛ս, C. de Albuquerque, V. Roaf, On the right track – Good practices in realising the rights to water and sanitation, p. 206, 2012, հասանելի է www.ohchr.org/EN/Issues/WaterAndSanitation/SRWater/Pages/SRWaterIndex.aspx կայքում:

¹⁹ Տե՛ս, UNHRC «Report of the Independent Expert on the Issue of Human Rights Obligations Related to Access to Safe Drinking Water and Sanitation, Catarina de Albuquerque» (2010) UN Doc A/HRC/15/31 (UNHRC Non-State actors Report) [63(h)].

²⁰ Տե՛ս, UN CESCR «General Comment 15» (n 1) [24].

²¹ Տե՛ս, UN CESCR «General Comment 15» (n 1) [11].

միջավայրի և սոցիալական առումներով կայուն զարգացում ապահովող միջոց²²: Ջրի և սանիտացիայի ծառայությունների կայուն զարգացումը հիմնված է մի շարք գործոնների վրա, ինչպիսիք են՝ համապատասխան ենթակառուցվածքների առկայությունը, բավարար սպասարկումը, անխափան գործարկումը և այլն: Վերջիններիս բացակայության կամ բավարար չլինելու պարագայում ստեղծվում է ծառայությունների հասանելիության կեղծ տպավորություն²³:

Ըստ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունների՝ մասնակից պետությունները պետք է ընդունեն համապարփակ և ինտեգրված ծրագրեր՝ ապահովելու ներկա և ապագա սերունդների համար բավարար և անվտանգ ջրի առկայությունը²⁴: Որպես օրինակ կոմիտեն մատնանշում է ջրային ռեսուրսներն աղտոտումից, ջրամբարներից ջրերի գերբացթողումից պաշտպանելը՝ մշտադիտարկում իրականացնելով առկա ռեսուրսների և վերջնական սպառողների կողմից ջրի արդյունավետ օգտագործման նկատմամբ և այլն²⁵:

1.2. ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ջրի և սանիտացիայի ոլորտի իրավակարգավորումների ուսումնասիրությունը թույլ է տվել վերհանել այն չափանիշները, որոնք կարող են ուղենիշ ծառայել ոլորտը կարգավորող իրավական ակտերի հետագա մշակման համար:

Չափանիշ 1. Մատչելիություն²⁶.

Ջուրը և սանիտացիան պետք է տնային պայմաններում կամ տան ուղղակի հարևանությամբ հասանելի լինեն յուրաքանչյուրին՝ բավարար քանակով և շարունակական հիմունքներով՝ անձնական և տնային օգտագործման համար:

Մասնավորեցնելով պետք է նշել, որ ջրի մատակարարումը անձնական և տնային օգտագործման համար պետք է լինի բավարար և շարունակական, որպեսզի այն օգտագործողը

²² Տե՛ս, UNHRC Independent Expert on the Issue of Human Rights Obligations Related to Access to Safe Drinking Water and Sanitation, «Good Practices» related to Access to Safe Drinking Water and Sanitation: Questionnaire» (2010) [հարց N 10].

²³ Տե՛ս, Ջրի և սանիտացիայի ենթակառուցվածքներում թերությունների համառոտ ակնարկի համար, տե՛ս: UNHRC «Report of the Special Rapporteur on the human right to safe drinking water and sanitation» (2013) A/HRC/24/44 [4].

²⁴ Տե՛ս, UN CESCR ‘General Comment 15’ (n 1) [28]: Ընդունված է 20 հունվարի 2003թվականին ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 29-րդ համաժողովում (E/C.12/2002/11):

²⁵ Տե՛ս, UN CESCR ‘General Comment 15’ (n 1) [28]: Ընդունված է 20 հունվարի 2003թվականին ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 29-րդ համաժողովում (E/C.12/2002/11):

²⁶ Այս և հետագա շարադրանքի չափանիշները տե՛ս The human rights to water and sanitation in courts worldwide, a selection of national, regional and international case law, հասանելի է հետևյալ հղումով՝ https://hrbportal.org/wp-content/files/Human-rights-to-water-and-sanitation-in-courts_WEB_2015.pdf:

մշտապես հնարավորություն ունենա օգտագործել ջուրը խմելու, հագուստի վազման, սննդի պատրաստման, ինչպես նաև անձնական և տնային հիգիենայի համար²⁷: Հարկ է նշել նաև, որ ջրի աղբյուրների քանակը պետք է լինի այնքան, որ ջրի հավաքելու ու սպասելու ժամանակահատվածն անհիմն երկար չլինի²⁸:

Տանը և բոլոր այն վայրերում, որտեղ մարդն անցկացնում է իր օրվա մեծ մասը, ջուրը և սանհանգույցները պետք է լինեն մատչելի: Պետությունները հատուկ պարտականություն են կրում ապահովել ջրի և սանիտացիայի մատչելիությունը հասարակական հաստատություններում (օրինակ՝ դպրոցներ, հիվանդանոցներ, փախստականների կացարաններ, ՔԿՀ-ներ և այլն), հասարակական վայրերում (օրինակ՝ խանութներ, սննդի օբյեկտներ և այլն), ինչպես նաև ոչ պետական մարմիններում (օրինակ՝ մասնավոր դպրոցներ, մասնավոր առողջապահական հաստատություններ և այլն)²⁹:

Ջրի և սանիտացիայի բացակայության դրսևորումները կարող են հանգեցնել անգամ պետության կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների խախտման: Նմանատիպ խախտման վերաբերյալ է Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռը: Այսպես, հիշյալ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, իսկ ջրի և սանիտացիայի բացակայությունը կարող է հանգեցնել նշված հոդվածով պահպանվող արժեքների խաթարմանը: Մինչդեռ, Եվրոպական դատարանը վճռով նշել է, որ պահման վայրում գտնվելու ընթացքում դիմումատուին չի թույլատրվել անարգել օգտվել զուգարանից և խմելու ջրից: Եվրոպական դատարանը հայտնել է դիրքորոշում այն մասին, որ անընդունելի է անձին կալանքի տակ պահել այնպիսի պայմաններում, որտեղ չեն ապահովվում վերջինիս

²⁷ Տե՛ս, UN CESCR ‘General Comment 15’ in ‘Note by the Secretariat, Compilation of General Comments and General Recommendations adopted by Human Rights Treaty Bodies’ (2008) UN Doc HRI/GEN/1/Rev.9 [12(a)], [37(a)] և [37(c)]; UNHRC «Report of the Independent Expert on the Issue of Human Rights Obligations Related to Access to Safe Drinking Water and Sanitation, Catarina de Albuquerque» (2009) UN Doc A/HRC/12/24 (Sanitation Report) [70]; UNHRC «Report of the Special Rapporteur on the Human Right to Safe Drinking Water and Sanitation» (2011) UN Doc A/HRC/18/33 (Planning Report) [8(a)]; UNHRC «Report of the Independent Expert on the Issue of Human Rights Obligations Related to Access to Safe Drinking Water and Sanitation» Catarina de Albuquerque» (2010) UN Doc A/HRC/15/31 (Non-State actors Report) [47(a)] և [47(c)].

²⁸ Տե՛ս, UN CESCR ‘General Comment 15’ (n 1) [37(a)].

²⁹ Տե՛ս The human rights to water and sanitation in courts worldwide, a selection of national, regional and international case law, հասանելի է հետևյալ հղումով՝ https://hrbaportal.org/wp-content/files/Human-rights-to-water-and-sanitation-in-courts_WEB_2015.pdf:

տարրական կարիքները³⁰: Արդյունքում, Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Մատչելիությունը որպես գաղափար պետք է ներդրվի ջրի և սանիտացիայի ծառայությունների մատուցման սակագների համակարգում և կարգավորվի սոցիալական անվտանգության և սուբսիդավորման սխեմաներով: Մատչելիությունը կարող է գնահատվել՝ առանձնացնելով այն ֆինանսական միջոցները, որոնք այլ հիմնարար կարիքների և նպատակների բավարարման համար վճարվող ֆինանսական միջոցներից պետք է հատկացվեն ջրի և սանիտացիայի ծառայությունների վճարման համար:

Չափանիշ 2. Ֆիզիկական հասանելիություն.

«Ֆիզիկական հասանելիություն» հասկացության նորմատիվ բովանդակությունը նախ և առաջ պահանջում է այնպիսի ենթակառուցվածքների առկայություն և դրանց այնպիսի տեղակայում, որպեսզի վերջիններս մշտապես հասանելի լինեն առանց բացառության բոլոր օգտվողների համար՝ ներառյալ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց, ինչպես օրինակ՝ երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք:

Պետությունները պետք է ապահովեն ջրի աղբյուրների և սանհանգույցների տեղակայման որոշակի նվազագույն չափանիշների առկայություն և պահպանում, իսկ միջազգային չափանիշները պետք է ուղենշային լինել ազգային չափորոշիչների սահմանման համար³¹: Միաժամանակ, հարկ է նշել, որ նշված չափանիշները պետք է դիտվեն որպես նվազագույն պահանջներ, իսկ պետությունները պետք է մշտապես ձգտեն ջրի և սանհանգույցների ֆիզիկական հասանելիության չափանիշների առավելագույն ներդրմանը և դրանց շարունակական բարելավմանը:

Ջրի աղբյուրները և սանհանգույցները, բացի հեշտ հասանելի և ֆիզիկական նվազագույն ռիսկերի հաշվառմամբ տեղակայված լինելը, պետք է գտնվեն այնպիսի վայրերում, որ ապահովվի բոլոր օգտվողների ֆիզիկական անվտանգությունը՝ թե՛ ցերեկային և թե՛ գիշերային ժամերին³²: Վերը նշվածն ապահովելու համար չափազանց կարևոր է սանհանգույցների տեղակայման վայրերին բնորոշ առանձնահատկությունների վեր հանումը և, ըստ այդմ,

³⁰ Տե՛ս Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 08 դեկտեմբերի 2008թվականի վճիռ 53-րդ պարբերությունը: Հասանելի է հետևյալ հղումով <http://static.echr.am//judgments/955dc9cad193222fcdc1a754e46a1dd42.pdf>:

³¹ Ջրի ելքերը (Water outlets) պետք է այնպես տեղակայվեն, որպեսզի ջուր վերցնելու և վերադարձի ընդհանուր ճանապարհը չգերազանցի 30 րոպեն: Այնտեղ, որտեղ սանիտացիան տնային պայմաններում կարճաժամկետ հեռանկարում անհնար է, սանհանգույցները պետք է համատեղ օգտագործեն առավելագույնը 5 տնային տնտեսություն: Տե՛ս, WHO, UNICEF Joint Monitoring Programme, JMP, Report of the Second Consultation on Post-2015 Monitoring of Drinking-Water, Sanitation and Hygiene, 2012, հասանելի է http://www.wssinfo.org/fileadmin/user_upload/resources/WHO_UNICEF_JMP_Hague_Consultation_Dec2013.pdf. Տե՛ս նաև, G. Howard, J. Bartram, Domestic Water Quantity, Service Level and Health, WHO, 2003.

³² Տե՛ս, UNHRC Sanitation Report (n 4) [75].

տեղանքի ընտրությունը: Պետությունները պետք է պոզիտիվ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու ջրի աղբյուրներից և սանհանգույցներից օգտվելիս յուրաքանչյուրի ֆիզիկական անվտանգությունը³³:

Ներկայացվածի հետ մեկտեղ շատ կարևոր է նաև, որ ջրի աղբյուրները և սանհանգույցները նախագծվեն այնպես, որպեսզի դրանք ֆիզիկապես հասանելի լինեն մարդկանց: Խողովակներից և հորերից ջրի դուրսբերման մեխանիզմը, ինչպես նաև սանհանգույցների նախագծումը պետք է իրականացված լինի տարեցների, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև հղի կանանց հատուկ կարիքների հաշվառմամբ³⁴:

Չափանիշ 3. Ընդունելի բնույթ.

Ընդունելի բնույթի չափանիշի էությունը կայանում է նրանում, որ ջրի և սանիտացիայի ծառայություններ մատուցելիս հարկ է հաշվի առնել տվյալ ծառայությունները ստացողների մշակութային կարիքները և նախապատվությունները³⁵, ինչը ևս մեկ անգամ գալիս է հաստատելու այն պնդումը, որ շահառուների մասնակցությունը ջրի աղբյուրների և սանհանգույցների տեղակայման և նախագծման հարցերում չափազանց կարևոր է դրանց ընդունելիության չափանիշն ապահովելու համար:

Ջրի ընդունելիության չափանիշների մասին խոսելիս պետք է նախ և առաջ նշել, որ այն չպետք է լինի պղտոր կամ ունենա անսովոր համ և հոտ, քանի որ այդ պարագայում մարդիկ կարող են դիմել ջրի ոչ անվտանգ այլընտրանքների³⁶: Ջրի աղբյուրները, նույնպես, պետք է լինեն օգտագործման համար ընդունելի՝ հատկապես նկատի ունենալով անձնական հիգիենան՝ կրկին նկատի ունենալով օգտվողների մշակութային նախապատվությունները և պահանջները:

Միայն ջրի աղբյուրների քանակն, ինքն իրենով չի կարող կանխորոշել փաստացի օգտագործման ծավալները: Որպեսզի ջրի աղբյուրները և սանհանգույցները հասանելի լինեն, դրանք պետք է ապահովեն օգտագործողների առանձնացվածությունը և արժանապատվությունը³⁷:

Սանհանգույցներն օգտագործողների համար կարող են ընդունելի լինել միայն, եթե դրանց նախագծումը և օգտագործման պայմանները համապատասխանում են օգտագործողների պահանջներին: Ընդունելիության չափանիշի պահպանումը պահանջում է նաև

³³ Տե՛ս, UN CESCR «General Comment 15» (n 1) [12(c)(i)]; UNHRC Sanitation Report (n 4) [75].

³⁴ Տե՛ս, UNHRC Sanitation Report (n 4) [76].

³⁵ Տե՛ս, UNHRC Sanitation Report (n 4) [80]; UNHRC Planning Report (n 3) [8(c)] and [71].

³⁷ Տե՛ս, UNHRC 'Report of the Special Rapporteur on the human right to safe drinking water and sanitation' (2013) UN Doc A/HRC/24/44/Add.3 [25] (Mission to Thailand).

օգտագործողների առանձնացվածություն, իսկ հաճախ՝ հասարակական վայրերում առանձին սանհանգույցներ կանանց և տղամարդկանց, դպրոցներում՝ աղջիկների և տղաների համար³⁸:

Չափանիշ 4. Որակ և անվտանգություն.

Ջուրը և սանիտացիայի ծառայությունները պետք է մատուցվեն այնպես, որպեսզի չխախտվի օգտագործողների և, ընդհանրապես, հանրության առողջության պահպանման իրավունքը: Ջուրը պետք է անվտանգ լինի մարդու օգտագործման, ինչպես նաև անձնական հիգիենայի համար: Այն պետք է գերծ լինի միկրոօրգանիզմներից, անթույլատրելի քիմիական միացություններից և ռադիոլոգիական վտանգներից, քանի որ դրանց առկայության պարագայում ջուրը կարող է սպառնալ մարդու առողջությանը և ընդհուպ մինչև՝ կյանքին: Սանհանգույցները պետք է հիգիենայի և տեխնիկական առումով օգտագործման համար լինեն անվտանգ³⁹: Բոլոր զուգարաններում պետք է տեղադրված լինեն անձնական հիգիենայի միջոցներ, ապահովված լինի ձեռքերը օճառով և ջրով լվալու հնարավորություն⁴⁰:

Պետությունները պետք է ներդնեն ջրի որակի վերահսկվող և իրագործելի չափանիշներ: Այսպես, ՄԱԿ-ի առողջապահության համաշխարհային կազմակերպությունը⁴¹ սահմանել է ջրի որակի չափանիշներ, որոնք պետությունների համար կարող են ուղենշային լինել: Պետությունների կողմից պետք է հաշվի առնվի նաև այն, որ սահմանված նվազագույն չափանիշներում հնարավոր է, որ հաշվի չառնվեն որոշակի առանձնահատուկ կարիքների իրացման ապահովումներ (օրինակ այն մարդկանց դեպքում, որոնք հատկապես խոցելի են վարակներից), հետևաբար՝ այդ չափանիշները չպետք է ընկալվեն որպես բացարձակ: Ավելին, պետությունները պետք է այդ չափանիշները տեղայնացնեն և զարգացնեն համապատասխան երկրի կամ տարածքի ազգային և տեղական իրավիճակի տրամաբանությամբ: Շատ կարևոր է նաև վերը նշված չափանիշների բարելավումը և կատարելագործումը պետությունների կողմից իրականացվող շարունակական աշխատանքների միջոցով:

Ամփոփելով վերը նշվածը՝ հարկ է նշել, որ բացի հիգիենայի պահպանության ուղղությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացման և կրթության տրամադրման ապահովումը, պետությունները պարտավոր են վերահսկել ջրի որակի չափանիշների համապատասխանությունը, կանխարգելեն ջրի աղտոտումը, ինչպես նաև ապահովեն օգտագործված ջրի մաքրման ազգային կարգավորումների պահպանությունը՝ հատկապես խմելու ջրի մատակարարների կողմից:

³⁸ Տե՛ս օրինակ, Հնդկաստանի գերագույն դատարանի 2012թվականի՝ Շրջակա միջավայրի և սպառողների պաշտպանության հիմնադրամն ընդդեմ Դելիի ադմինիստրացիա և այլք գործի համառոտագրությունը:

³⁹ Տե՛ս, UN CESCR «General Comment 15» (n 1) [12(b)]; UNHRC Sanitation Report (n 4) [72].

⁴⁰ Տե՛ս, UN CESCR «General Comment 15» (n 1) [12(b)]; UNHRC Sanitation Report (n 4) [72].

⁴¹ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Միավորված Ազգերի Կազմակերպությանը պատկանող միջկառավարական կազմակերպություն: Հիմնվել է 1948 թվականի ապրիլի 7-ին: Նպատակ ունի բոլոր ժողովուրդներին բարձրացնել առողջապահության ամենաբարձր մակարդակի:

ԳԼՈՒԽ 2.

ԶՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում և հատուկ զեկույցներում մշտապես հետևողական անդրադարձ է կատարվում նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության հարցին, որի համար հիմք են ծառայում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, հրապարակային աղբյուրներով ներկայացված խնդիրները և այլն: Խնդրի մասին մշտապես բարձրաձայնում են նաև ուսումնական հաստատությունների աշակերտները՝ Պաշտպանի ու նրա ներկայացուցիչների հետ առանձնազրույցներում՝ ինչպես այդ հաստատությունների, այնպես էլ Պաշտպանի աշխատակազմ այցերի ընթացքում:

Խնդիրը նաև գտնվել է միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Այսպես, դեռևս 2013 թվականին Երեխաների իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեն նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վիճակը ներկայացված եզրափակիչ դիտարկումներում համարել է մտահոգիչ⁴²: Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ կոմիտեն այս հարցը դիտարկել է հենց կրթության իրավունքի իրացման հարցը գնահատելիս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ջրի և սանիտացիայի հասանելիության հարցն առավելապես խնդրահարույց են համարում նաև երեխաները: Այսպես, հարցված երեխաների մեծամասնությունը նշել է, որ դպրոցական ենթակառուցվածքները բարելավման կարիք ունեն: Մասնավորապես, հարցվածների 48%-ը ցանկացել է, որպեսզի բարելավվեն ջրի և սանիտարական պայմանները⁴³:

2.1 ԶՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությանը, բարելավմանը և վերականգնմանը, բնական պաշարների ողջամիտ օգտագործմանը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով ապագա սերունդների առջև պատասխանատվությունը: Նույն հոդվածի 2-րդ

⁴² <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

⁴³ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ, «Երեխաների կարծիքով...»

https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/YV_brief%20version_Final%20_%20arm.pdf, էջ 19

մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Ըստ այդմ, վերոնշյալ իրավունքների մանրամասն իրացման կառուցակարգերը սահմանված են օրենքներով: Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է երեխայի՝ առողջության պահպանման և ամրապնդման իրավունքը, իսկ 8-րդ հոդվածը սահմանում է երեխայի՝ անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը և սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք:

Ջրի հասանելիությունը և սանիտացիան հիմնարար են երեխաների առողջության պահպանման և կրթության իրավունքի իրացման տեսանկյունից: Ուստի, պետությունը պետք է քայլեր ձեռնարկի համապատասխան միջավայրի ստեղծման համար: Ջրի և սանիտացիայի բավարար պայմանների բացակայությունը պարունակում է ռիսկեր համաճարակների և հիվանդությունների տարածման տեսանկյունից: Այն նաև խնդրահարույց է երեխաների՝ որպես հասարակության անդամի՝ սանիտացիայի և հիգիենայի վերաբերյալ իրազեկման բարձրացման և կրթության: Նշյալ բոլոր գործոնները ուղիղ կապի մեջ են երեխայի առողջության պահպանման և կրթության իրավունքների հետ:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ: Ավելին, նույն օրենքի «Սովորողների իրավունքները և սոցիալական պաշտպանվածությունը» վերտառությամբ 49-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունը նպաստում է սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Ըստ այդմ, երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքը խաչվում է առողջության պահպանման իրավունքի հետ, քանի որ դրա լիարժեք իրականացումը կարող է պայմաններ ստեղծել մյուս իրավունքի արդյունավետ իրացման համար:

Տվյալ գաղափարն ամրագրվել է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում, որի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուսումնական հաստատությունն ապահովում է կրթական

ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Ավելին, հատուկ ուշադրություն է դարձվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին:

Համապատասխան կարգավորումներ են ամրագրված նաև «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում, որի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նախադպրոցական ուսումնական հաստատությունը երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման և առողջության ամրապնդման համար ապահովում է սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան պայմաններ: Ըստ այդմ՝ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվել է, որ տեղական ինքնակառավարման մարմինները նախադպրոցական կրթություն ստանալու համար ապահովում են պայմաններ:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում ջրամատակարարման և ջրահեռացման իրավական կարգավորումները նախատեսված են մի շարք ենթաօրենսդրական իրավական ակտերով, որոնք ուղղված են ուսումնական գործընթացում ընդգրկված սովորողների և անձնակազմի առողջության համար վտանգավոր և վնասակար գործոնների, անբարենպաստ պայմանների ազդեցության կանխարգելմանը և սահմանում են նոր կառուցվող, վերակառուցվող, շահագործվող հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատության (այսուհետ՝ հաստատություն) տեղադրմանը, հողամասի, տարածքի, շենք-շինությունների սենքերի կառուցվածքին, գույքին, սարքավորումներին, հաստատության սենքերի օդի ջերմային ռեժիմին, բնական և արհեստական լուսավորությանը, ջրամատակարարմանը և կեղտաջրերի հեռացմանը, կրթական գործընթացի ռեժիմին, սովորողների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպմանը, հաստատության պահպանման և սանիտարական վիճակին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներին:

2.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ, ԶՐԱՀԵՌԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԱՆ

2.2.1 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ. ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՄԵԼՈՒՆՏՆԵՍԱԿԱՆ ՀՈՍՈՂ ԶՈՒՐ, ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ

առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանի⁴⁴ 4-րդ գլխով սահմանվում են շահագործվող հաստատությունների ջրամատակարարմանը և կեղտաջրերի հեռացմանը ներկայացվող պահանջները: Այսպես, հրամանի 66-րդ կետով նախատեսվում է, որ հաստատության շենքն ապահովվում է շուրջօրյա խմելու-տնտեսական հոսող ջրով, ջրահեռացման համակարգով, իսկ ժամային գրաֆիկով ջրամատակարարման դեպքում, առնվազն սանհանգույցների սարքավորումները (լվացարանները, զուգարանակոնքերը) ապահովվում են ջրակուտակիչ տարողություններով՝ մշտական հոսող ջրի ապահովման համար: Զրի մատակարարման կարգ է նախատեսվել նաև ՀՀ կառավարության «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին» 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշմամբ⁴⁵ սահմանված հավելվածի 20-րդ կետի 3-րդ ենթակետի «ը» և «ժ» կետերով, որի համաձայն՝ ուսումնական հաստատությունը պետք է ապահովված լինի շուրջօրյա հոսող խմելու ջրով և ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցները՝ շուրջօրյա հոսող ջրով:

Մինչդեռ, տարբեր հետազոտություններ վկայում են, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության հարցում առկա է համակարգային խնդիր: Դրա արդյունքում՝ վտանգվում են երեխաների իրավունքները, ինչպես օրինակ՝ առողջության պահպանման կամ կրթություն ստանալու իրավունքները: Մշտական հոսող ջրի բացակայությունը նախ ռիսկային է դարձնում սանիտացիայի հասանելիության ապահովման հարցը, ինչպես նաև վտանգում է մաքուր խմելու ջրի հասանելիության հարցը: Գրաֆիկով ջրամատակարարումը կարող է որոշ դեպքերում արդյունավետ լինել, եթե դրա գրաֆիկը իրական հնարավորություն է ստեղծում ապահովել ջրի հասանելիության իրավունքը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» 2018 թվականի տարեկան զեկույցում ներկայացված են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների շենքային պայմանները 2017/2018 ուսումնական տարվա վերաբերյալ: Ըստ այդ տվյալների՝ Հայաստանում գործող 1421 դպրոցներից 72-ը դեռևս չունի ջրամատակարարում⁴⁶:

Սույն զեկույցի մշակման համար իրականացված այցերի ընթացքում ևս վեր են հանվել փաստեր, որոնք վկայում են ջրամատակարարման բացակայության մասին: Մասնավորապես, հետազոտության ենթարկված 121 դպրոցից շուրջօրյա խմելու տնտեսական հոսող ջրով ապահովված են եղել 105-ը, իսկ մնացած 16 դպրոցից 1-ի (Սյունիքի մարզի) ներսում ջուր չկա, իսկ մյուս դպրոցում 3 օրը մեկ անգամ գրաֆիկով (Սյունիքի մարզի), իսկ 14 դպրոցում տրվում է ժամային գրաֆիկով (տե՛ս Աղյուսակ 3): Օրինակ, Սյունիքի Խնածախ համայնքի միջնակարգ

⁴⁴ Այսուհետ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրաման

⁴⁵ Այսուհետ՝ ՀՀ կառավարության 2010 թվականի N 1334-Ն որոշում

⁴⁶ https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf, էջ 65

դպրոցում կատարված այցի ընթացքում, դպրոցի վարչակազմը տեղեկացրել է, որ դպրոցի համար խմելու ջուրը բերվել է մոտակա աղբյուրից, իսկ երեք օրը մեկ անգամ տրվում է խմելու համար անպիտան ջուր (խողովակների հին լինելու պատճառով ջրի գույնը և համը փոխված են լինում), որը հավաքվելով բաքերում, օգտագործվում է սանհանգույցներում: Բացի աղբյուրից բերվող ջրից, երեխաները նաև սեփական շշերով են ջուր բերում դպրոց: Ջուրը գրաֆիկով է հասանելի նաև, օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 90 դպրոցում՝ առավոտյան 10-ին և երեկոյան ժամերին, Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի դպրոցում՝ յուրաքանչյուր օր առավոտյան 8:30-ից մինչև 14:00-ն, Վերնաշենի դպրոցում՝ 9:00-ից 12:00-ն:

Սույն զեկույցի մշակման ընթացքում կատարված այցերի ժամանակ պարզվել է նաև, որ բազմաթիվ էին այնպիսի դեպքերը, երբ դպրոցում ջրի հասանելիության խնդիրը կապված էր ոչ թե հաստատության, այլ այն համայնքի ջրամատակարարման հետ, որտեղ գտնվում էր դպրոցը: Գեղարքունիքի մարզի Վահան համայնքի միջնակարգ դպրոցում տեղեկացրել են, որ դպրոցում ջուրը հասանելի է այն գրաֆիկով, ինչը որ առկա է ամբողջ համայնքում, սակայն այն գրաֆիկ անվանել չի կարելի, քանի որ չկան ջրամատակարարման ստույգ ժամեր: Ելնելով վերջինից՝ դպրոցի ուսուցչական և տնտեսական մասի աշխատակիցները թե՛ սեփական, թե՛ դպրոցի մոտակա տներից դուրսերով կամ շշերով ջուր են բերում:

Ընդ որում, ի տարբերություն քաղաքային համայնքների հաստատությունների, գյուղական համայնքներում խնդիրն առավել նկատելի է: Այսպես, ջրամատակարարումը բացակայում է բացառապես մարզային դպրոցներում (օրինակ՝ Արագածոտնի մարզի 15 դպրոցում, Գեղարքունիքի մարզի 13 դպրոցում, Շիրակի մարզի 12 դպրոցում)⁴⁷: Նշվածը չափազանց խնդրահարույց է և ներկայացնում է ընդհանուր պատկերը Երևանում և մարզերում գործող հաստատությունների վերաբերյալ: Ստացվում է, որ Երևանում սովորող երեխաները կարող են օգտվել խմելու հոսող ջրից, մինչդեռ մարզերում ջրի հասանելիության ապահովման համար կիրառվում են տարբեր մեթոդներ (հաճախ նաև անձնական միջոցների հաշվին): Սույն զեկույցի մշակման համար կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ մարզերի առանձնանում է Արարատի մարզը, որտեղ մշտադիտարկման ենթարկված դպրոցների 75%-ը չունի շուրջօրյա ջրամատակարարում: Չորս մարզում շուրջօրյա ջրամատակարարում չունեցող դպրոցների քանակը կազմում է 20-25%՝ Արագածոտն, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր (տե՛ս, Աղյուսակ 4):

Նշված խնդրի հետ մեկտեղ, հարկ է նշել նաև, որ ուսումնասիրված մի շարք դպրոցներում ջուրն անհասանելի էր ծորակների ոչ սարքին լինելու կամ դրանց բացակայության պատճառով: Ավելին, ուսումնասիրության ընթացքում հանդիպել են այնպիսի դեպքեր, երբ ամբողջ դպրոցում առկա է եղել ընդամենը մեկ ծորակ (օրինակ՝ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 1 վարժարանի դպրոցներից մեկում ծորակը եղել է միայն աղջիկների համար նախատեսված սանհանգույցում): Այսինքն, անգամ այն պարագայում, երբ դպրոցում հասանելի է մշտական հոսող ջուր, ծորակի

⁴⁷ https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf, էջ 104

բացակայության պարագայում այն դառնում է անիմաստ, քանի որ բացակայում է օգտագործման հնարավորությունը: Նշվածը խնդրահարույց է նաև երեխայի լավագույն շահի տեսանկյունից, քանի որ, փաստորեն, վերջինս գրկված է լինում ջրի և սանիտացիայի սանիտացիայի հասանելիությունից:

Ավելին, ի տարբերություն հանրակրթական ուսումնական հաստատությունների, գործող օրենսդրությամբ բացակայում են նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մասնավորապես՝ համապատասխան շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ:

Ուստի, անհրաժեշտ է օրենսդրությամբ շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ ամրագրել նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Ուսումնական հաստատություններում, որպես մշտական ջրամատակարարման առկայությունը գնահատելու չափանիշ, կիրառվել է վերջին մեկ տարվա ընթացքում ջրանջատումների քանակի, տևողության և ջրանջատման ժամանակ նախօրոք տեղեկացված լինելու փաստի համադիր վերլուծությունը: Այսպես, «ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N 130-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործման կարգավորման, խմելու ջրի մատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառումը և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի N 658-Ն որոշման⁴⁸ 2.4-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մատակարարը պարտավոր է բաժանորդին իրազեկել ջրամատակարարման դադարեցման կամ ընդհատման և ջրամատակարարման վերականգնման պատճառների ժամկետների մասին:

Ուսումնասիրման արդյունքում, մասնավորապես, պարզ է դարձել, որ հետազոտված 121 դպրոցից 101-ի (83%) ղեկավարությունը նախօրոք տեղեկանում է ջրամատակարարման ընդհատման մասին, իսկ ջրանջատման տևողությունը միջինում կազմել է 2-4 ժամ (տե՛ս Աղյուսակ 21-24): Մշտադիտարկված 80 նախադպրոցական կազմակերպությունից միայն 64-ն է (80%) նախօրոք տեղեկանում ջրամատակարարման ընդհատման մասին, իսկ 6 հաստատություններում՝ ըստ դրա ղեկավարության՝ ջուրը չի անջատվում:

Նշված ցուցանիշները կարևոր են սանիտարահիգիենիկ տեսանկյունից, հաշվի առնելով այն, որ մշտական հոսող ջրի բացակայությունը հիվանդությունների տարածման համար ռիսկի գործոն է: Ուստի չափազանց կարևոր է բոլոր հաստատություններին նախապես տեղեկացնել ջրանջատումների մասին: Ընդ որում, անհրաժեշտ է, որ այդ իրազեկումը լինի իրական, այսինքն

⁴⁸ Այսուհետ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի N 658-Ն որոշում

իրական հնարավորություն ստեղծի հաստատություններին ունենալ ամբողջական տեղեկատվություն և ըստ այդմ, քայլեր ձեռնարկել ջրի հասանելիության ապահովման համար:

Ուստի, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ջրանջատման բացառապես բոլոր դեպքերի մասին իրական իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել է նաև ջրանջատման ժամանակ մոտակա ջրի ծորակի գտնվելու վայրը, կազմակերպությունում ջուր չլինելու ժամանակահատվածը, որի արդյունքում արձանագրվել է, որ բացառությամբ մշտական ջրամատակարարման դեպքերի, դպրոցներում այն միջինում կազմում է 2-3 ժամ, իսկ ջրանջատման դեպքում ջուր պահեստավորելու ժամանակահատվածը՝ միջինում 20-30 րոպե (տե՛ս նաև Աղյուսակ 74): Միաժամանակ, մշտադիտարկված 74 նախադպրոցական կազմակերպությունների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ ջրի բացակայության դեպքերում հաստատության անձնակազմը մեծ մասամբ օգտվում է մոտակա տներում առկա ծորակներից կամ պահեստավորված ջրից (26%), ինչպես նաև ցայտաղբյուրից (18%): Սակայն, մի շարք դեպքերում հաստատությունների ղեկավարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ջրի բացակայության պարագայում մոտակա ջրի ծորակ կամ աղբյուր հասանելի չէ (օրինակ՝ Կոտայքի մարզի Արզականի նախադպրոցական ուսումնական հաստատություն): Մեկ այլ դեպքում, օրինակ, Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի դպրոցի տնօրինությունը տեղեկացրել է, որ թեև հաստատությունում ջրի երկարատև բացակայությունը հազվադեպ երևույթ է, ամեն դեպքում նման պարագայում համայնքապետարանի կողմից հաստատություն է ուղարկվում ջրով բեռնված հատուկ մեքենա:

Այն հաստատություններում, որտեղ ջրանջատումներ գրեթե չեն լինում, անձնակազմի կողմից նշվել է, որ ջրի երկարատև բացակայության և ջրի պահեստավորման հնարավորություն առկա չլինելու դեպքում հաստատության գործունեությունը ժամանակավորապես կդադարեցվի (տե՛ս Աղյուսակ 73-77): Այսպես, ըստ Շիրակի մարզի Գյումրու «Ժպիտ» նախադպրոցական ուսումնական հաստատությունը վարչակազմի՝ թեև տարվա մեջ լինում է ջրի բացակայություն 2 դեպք, սակայն, մոտակայքում ջրի հասանելի աղբյուր չկա, և իրենք ստիպված են լինելու դադարեցնել աշխատանքը մինչ ջրի առկայությունը վերականգնվի: Նշվածը բնականաբար անթույլատրելի է, քանի որ այդ պարագայում խնդրի առաջացման դեպքում տուժում է կրթություն ստանալու իրավունքը, ինչը միևնույն ժամանակ խնդրահարույց է երեխայի լավագույն շահի տեսանկյունից: Ավելին, այն կարող է նաև բարդություններ ստեղծել ծնողների համար, ովքեր հավելյալ գործողություններ կիրականացնեն երեխաների խնամքի կազմակերպման համար:

«Առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանով նախատեսված է նաև չկոյուղացված բնակավայրերում կոյուղու կազմակերպման իրավակարգավորումը: Այսպես, չկոյուղացված բնակավայրերում տեղակայված հաստատություններում, միայն տեղային մաքրման սարքավորումների առկայության դեպքում, տեղադրվում է կոյուղու ներքին ցանց՝

միացված կեղտաջրերի կուտակման ջրանթափանց հորին կամ կեղտաջրերի տեղային մաքրման սարքավորմանը: Կեղտաջրերի կուտակման ջրանթափանց հորից կեղտաջրերի հեռացումը կատարվում է մասնագիտացված կազմակերպության կողմից՝ հորի 2/3 լցվելուց հետո (կետ 69): Այս առումով հարկ է նշել, որ դիտարկման ենթարկված 121 դպրոցից միայն 21-ն ունեին կեղտաջրերի կուտակման ջրանթափանց հոր: Այդ դպրոցներից միայն 5-ի (24%) կեղտաջրերի հեռացումն է կատարվում մասնագիտացված կազմակերպության միջոցով, 5-ի (24%) կեղտաջրերի հեռացումը չի իրականացվում մասնագիտացված կազմակերպության կողմից, իսկ 11 դպրոցի (52%) վերաբերյալ տվյալները բացակայում են:

Սակայն ջրահեռացման և կեղտաջրերի համակարգերով շենքի ապահովված լինելու պարագայում անգամ վեր են հանվել խնդիրներ: Այսպես, Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 8 դպրոցում թեև առկա է կեղտաջրերի հեռացման համակարգ, սակայն այն գործում է թերություններով՝ կեղտահեռացումն իրականացվում է դժվարությամբ: Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 դպրոցի ջրահեռացման և կեղտաջրերի հեռացման համակարգը սխալ կառուցված լինելու պատճառով խցանվում է, ջուրը հավաքվում է, իսկ խողովակների հին և փտած լինելու պատճառով մշտապես առաջանում է հավելյալ աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են նաև խնդրահարույց այնպիսի դեպքեր, որոնք սպառնում են նաև շրջակա հասարակության ու միջավայրի առողջության պահպանմանը: Այսպես, Սյունիքի մարզի Սյունիք համայնքի միջնակարգ դպրոցի կեղտաջրերը հեռացվում են՝ լցվելով հարակից ձորակը: Մեկ այլ դեպքում, Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Սուրեն Սպանդարյանի անվան թիվ 1 դպրոցի կեղտաջրերն էլ լցվում են ուսումնական հաստատության կողքով հոսող Դեբեդ գետը: Շիրակի մարզի Ազատան համայնքի միջնակարգ դպրոցի կոյուղաջրերը թափվում են Ջաջուռ գետը: Շիրակի մարզի Բենիամին համայնքի միջնակարգ դպրոցի կոյուղաջրերը թափվում են մոտակա գետակը: Արագածոտնի մարզի Քուչակ համայնքի միջնակարգ դպրոցի կոյուղաջրերը թափվում են մոտակա գետակը: Տավուշի մարզի Զորական համայնքի միջնակարգ դպրոցի կեղտաջրերը թափվում են մոտակա ձորակը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հաշվի առնելով ջրի հասանելիության կարևորությունը հատկապես հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ որոշ երկրներ անգամ արգելել են ջրանջատումները: Այսպես, Անգլիայի և Ուելսի ջրային ոլորտի 1999 թվականի ակտով թվարկվում են այն պայմանները, որոնց առկայության դեպքում ջրամատակարարումը չի կարող դադարեցվել: Դրանից են նաև երեխաներ խնամքի տները և կրթական հաստատությունները⁴⁹:

2.2.2 ԽՄԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

⁴⁹ Water industry act 1999. <http://www.legislation.gov.uk/ukpga/1999/9/contents>

Ուսումնասիրության է ենթարկվել նաև խմելու նպատակով ջրի օգտագործման եղանակները: Ուսումնական հաստատություններում խմելու ջրի հասանելիությունն ունի կենսարար նշանակություն: Մասնավորապես, հատուկ ուշադրության է արժանի այն, թե ինչպես են երեխաներն օգտվում խմելու ջրից: Վերջինս շատ կարևոր է երեխաների շրջանում ջրով փոխանցվող բակտերիալ, վիրուսային, սնկային և մակաբուծային հիվանդությունների առաջացման, դրա տարածման և ռիսկերի կառավարման տեսանկյունից⁵⁰:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի համաձայն՝ նոր կառուցվող և վերակառուցվող հաստատության միջանցքներում (ռեկրեացիաներում) ապահովվում է ջրի հոսքի կառավարմամբ խմելու ջրի ցայտաղբյուր՝ խմելու նպատակով ջրօգտագործման համար (կետ 9): Օրենսդրական այլ կարգավորումներ առկա չեն, ուստի յուրաքանչյուր հաստատություն հարցին տվել է անհատական լուծում:

Չնայած օրենսդրական նշված կարգավորումն ամրագրվել է 2017 թվականի ընթացքում և վերաբերում է նոր կառուցվող և վերակառուցվող հաստատություններին, այնուամենայնիվ առկա իրավիճակը գնահատելու համար այցերի ընթացքում ուսումնասիրվել է նաև տվյալ խնդիրը: Այսպես, ուսումնական հաստատություններում իրականացված հետազոտությունների ժամանակ պարզ է դարձել, որ ուսումնասիրության ենթարկված քաղաքային դպրոցներում ցայտաղբյուրներից ջուր են խմում 33%, իսկ գյուղերում 7% դեպքերում, ինչը մեզ հնարավորություն է տալիս պատկերացում կազմել հաստատություններում ցայտաղբյուրների առկայության մասին (տե՛ս Աղյուսակներ 12-15): Այցերի ընթացքում վեր են հանվել այնպիսի դեպքեր, երբ երեխաները ջուր խմում են միայն ցայտաղբյուրից, քանի որ դա միակ հնարավորությունն է: Օրինակ, Սյունիքի մարզի Վանատուր համայնքի միջնակարգ դպրոցի ներսում ջուրը հասանելի չէ, ուստի երեխաները ջուր խմելու համար ստիպված են լինում օգտվել դպրոցի շենքից դուրս գտնվող ցայտաղբյուրից: Նշվածը հատկապես խնդրահարույց է ձմեռային կամ ցուրտ եղանակին խմելու ջրից օգտվող երեխաների առողջության պահպանման տեսանկյունից:

Պետք է հաշվի առնել նաև, որ այդ ցայտաղբյուրից, 2018 թվականի հուլիս ամսվա դրությամբ օգտվում է 58 մարդ, որից 33-ը աշակերտ: Նման իրավիճակը խնդրահարույց է նաև սանիտարահիգիենիկ տեսանկյունից, քանի որ քննարկվող դեպքում նշված 58 մարդը լվացվելու համար ևս օգտվում է ցայտաղբյուրի ջրից (տե՛ս Լուսանկար 1):

⁵⁰ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ինֆեկցիոն բնույթի հիվանդությունների 80%-ը հիմնականում պայմանավորված է ջրային գործոնով, որը կապված է ջրամատակարարման սանիտարահիգիենիկ նորմերի խախտման և խմելու ջրի անբավարար որակական ցուցանիշների հետ: Ջրի միջոցով տարածվող հիվանդությունները լինում են ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն: Ջրամատակարարման կազմակերպման և շահագործման սանիտարական նորմերի, կանոնների խախտումը բերում է ինֆեկցիոն հիվանդությունների բռնկմանը: Ջրի միջոցով տարածվում են խոլերան, որովայնային տիֆը և պարատիֆերը, դիզենտերիան, սալմոնելոզը և այլն: (Նյութն ամբողջությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.armwater.am/files/adb/Gap/Gender%20training%20 2015.pdf>)



Ավելին, մշտադիտարկված հաստատություններից որոշներում թեև դպրոցի ներսում կամ հաստատության բակում առկա էր ցայտաղբյուր, սակայն դրանք սարքին չէին կամ ջուրը փակված էր լինում գլխավոր փականով: Այսպես, Վանաձոր քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցում ցայտաղբյուրի առկայության պարագայում, այնուամենայնիվ երեխաները չեն օգտվում դրանից, քանզի գտնվում է անսարքին վիճակում, իսկ օրինակ՝ Աբովյանի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 4 դպրոցում ցայտաղբյուրը գործում է միայն ամռանը, իսկ ձմռանը ջրի հոսքը փակվում է:

Դպրոցների վարչակազմի տրամադրած տվյալների համաձայն՝ որոշ դպրոցներում երեխաներն օգտվում են բուֆետներում առկա բաժակներից, իսկ որոշ դպրոցներում տրամադրվում են մեկանգամյա օգտագործման բաժակներ (Կապանի թիվ 2 ավագ դպրոց):

Սակայն, այցերի ընթացքում հանդիպել են դեպքեր, երբ ջուր խմելու համար նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակներն օգտագործվելուց հետո հավաքվում, լվացվում և նորից տրամադրվում էին երեխաներին (Ապարան քաղաքի թիվ 1 դպրոց):

Առկա են եղել նաև դպրոցներ, որտեղ երեխաների համար բաժակներ նախատեսված չեն եղել: Այսպես, Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցից տեղեկացրել են, որ երեխաները հիմնականում ջուրը խմում են ծորակներից բոռով, իսկ մինչև 4-րդ դասարանում սովորող երեխաները տնից բերված շշերից: Բոռով խմելու մասին տվյալներ են ստացվել նաև Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Հովհ. Թումանյանի անվան թիվ 2 դպրոցի, Արարատի մարզի Արարատի թիվ 4, Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի թիվ 2, Երևան քաղաքի թիվ 51 դպրոցների

վերաբերյալ: Ջուր խմելու այս եղանակն անթույլատրելի է, քանի որ այն ռիսկային է վարակների և տարբեր հիվանդությունների տարածման տեսանկյունից և չի ապահովում երեխայի առողջության պահպանման սկզբունքը: Երեխաները, չունենալով բավարար իրազեկվածություն նշյալ խնդիրների վերաբերյալ, հատկապես ռիսկային են դառնում վարակների տարածման տեսանկյունից: Արդյունքում վտանգներ են ստեղծվում երեխայի առողջության պահպանության տեսանկյունից ևս: Ներկայացված դպրոցի սանհանգույցում առկա չէին նաև ձեռքերի չորացման համար նախատեսված սարքեր կամ թղթյա մեկանգամյա օգտագործման սրբիչներ, ինչի արդյունքում երեխան անգամ բռով ջուր խմելուց հետո, հնարավորություն չի ունենում չորացնել ձեռքերը:

Մի քանի դեպքերում էլ անցկացված հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ երեխաները ջուր են խմում տնից բերված բաժակներով (Գորիսի թիվ 1 դպրոց):

Ըստ այդմ, ուսումնասիրությունները վկայում են, որ դպրոցներում խմելու ջրի օգտագործման համար կիրառվող մեթոդները ռիսկային են վարակների տարածման տեսանկյունից, իսկ ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի 9-րդ կետի կարգավորումն առ այն, որ նոր կառուցվող և վերակառուցվող հաստատության միջանցքներում (ռեկրեացիաներում) ապահովվում է ջրի հոսքի կառավարմամբ խմելու ջրի ցայտաղբյուր՝ խմելու նպատակով ջրօգտագործման համար բավարար չէ գործնականում խնդրի լուծման կապակցությամբ:

Ավելին, ուսումնասիրությունների ընթացքում թե՛ դպրոցի վարչակազմը, թե՛ երեխաները տեղեկացրել են, որ մեկ ցայտաղբյուրը հաճախ չի բավականացնում երեխաների, քանի որ հատկապես մեծ դպրոցներում երեխաների համար չափազանց բարդ է լինում օգտվել ցայտաղբյուրից:

Ուսրի, անհրաժեշտ է՝

1. մշակել հստակ ժամանակացույց մինչև ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի ընդունումը կառուցված շենքերում ցայտաղբյուրի առկայությունը ապահովելու համար,

2. որպես միջանկյալ լուծում՝ անհրաժեշտ է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանում կատարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների փարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել մեկանգամյա օգտագործման բաժակների նախատեսումը,

3. անհրաժեշտ է վերանայել վերոնշյալ հրամանի 9-րդ կետի պահանջը, ցայտաղբյուրի քանակի վերաբերյալ համապատասխան նորմեր նախատեսել՝ հաշվի առնելով դպրոցում երեխաների քանակը:

Հաշվի առնելով ջրի հասանելիության կարևորությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ այստեղ ևս մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են խմելու ջրից օգտվելու տարբեր եղանակները: Օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ հստակ նորմեր առկա չեն, ինչի արդյունքում տարբեր հաստատություններում տարբեր կերպ է լուծվում հարցը: Այսպես, մշտադիտարկված 80 նախադպրոցական կազմակերպությունից 59-ում (74%) երեխաները ջուր են խմում անհատական բաժակներից կամ շշերից: Մինչդեռ, 26% դեպքերում երեխաները ջուր են խմում ընդհանուր բաժակից (տե՛ս Աղյուսակ 67) :

Մասնավորապես, Սյունիքի մարզի Տեղ համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաներն օգտվում էին չպիտակավորված, ընդհանուր բաժակներից, թեև աշխատակիցների պնդմամբ՝ իրենք ամեն անգամ լվանում են բաժակները: Նույն իրավիճակն էր նաև Կապանի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Այս վիճակը չի բխում երեխայի լավագույն շահի ելակետային դրույթից, խիստ անթույլատրելի է և ակնհայտորեն վտանգում է երեխաների առողջությունը: Մեծ է նաև վարակների և մանրէների տարածման ռիսկը:

Գյուղական նախադպրոցական հաստատություններում 34% դեպքերում երեխաները ջուր են խմում ընդհանուր բաժակից, իսկ քաղաքային հաստատություններում տվյալ տոկոսային հարաբերակցությունը կազմում է 22% (տե՛ս Աղյուսակ 68) (տե՛ս Լուսանկար 2): Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ գյուղական համայնքներում ավելի բարձր է երեխաների շրջանում վարակների տարածման հավանականությունը համեմատած քաղաքային համայնքների: Մասնավորապես, ընդհանուր բաժակից օգտվում են ամենաշատը Սյունիքի (83%), Արարատի (50%), Շիրակի (40%) և Վայոց Ձորի (40%) մարզերում, Երևան քաղաքում (47%), իսկ Լոռու (19%) և Տավուշի (8%) մարզերում՝ համեմատաբար ավելի քիչ (տե՛ս Աղյուսակ 69): Օրինակ, Արագածոտնի մարզի Արագած համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոց կատարված այցի ժամանակ ստացված տեղեկության համաձայն՝ ջուր խմելու համար նախատեսված է ընդամենը մեկ բաժակ, որից օգտվում են դպրոցի բոլոր աշակերտները: Այս իրավիճակը խիստ անթույլատրելի է, քանի որ և վտանգավոր երեխաների շրջանում համաճարակային հիվանդությունների տարածման ռիսկի տեսանկյունից:

Լուսանկար N2



Ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ անհատական բաժակները կամ շշերը տարբերակվում են հիմնականում կենդանիների կամ մրգերի նկարներով (տե՛ս Լուսանկար 3):

Լուսանկար N3





Աշխատակիցների փոխանցմամբ յուրաքանչյուր երեխա գիտի իր տարբերանշանը և այդ առումով որևէ խնդիր չի առաջանում: Մինչդեռ, այս տարբերակը ևս ռիսկային է վարակների տարածման տեսանկյունից, քանի որ երեխաները հեշտությամբ կարող են խմել մեկը մյուսի շից: Ավելին, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ շերը հիմնականում միանման են, իսկ տարբերանշանները՝ շփոթեցնող:

Նկարագրված վիճակը խնդրահարույց է, քանի որ հավելյալ ռիսկ է առաջացնում երեխաների առողջության պահպանման տեսանկյունից և բարձրացնում է վարակների տարածման հավանականությունը:

Որպես խնդրի լուծում օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 22 նախադպրոցական ուսումնական հաստատությունում, երեխաները ջուր են խմում մանկապարտեզի կողմից տրամադրվող մեկանգամյա օգտագործման բաժակներով: Որոշ հաստատություններում աշխատակիցների փոխանցմամբ՝ երեխաներին տալիս են միայն եռացված-սառեցված ջուր, իսկ որոշ դեպքերում երեխաներն իրենց հետ շերով ջուր են բերում հաստատություն՝ հնարավոր վարակներից խուսափելու համար:

Ըստ այդմ, անհրաժեշտ է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանում կարարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների փարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել հստակ ամրագրված նորը, ըստ որի երեխաներին կտրամադրվեն բացառապես անհատական օգտագործման այնպիսի բաժակներ, որոնք նրանց համար հեշտ փարանջատելի լինեն մյուս բաժակներից կամ մեկանգամյա օգտագործման բաժակներ:

Բացի վերը նշվածները՝ տարածված են եղել նաև ջրի պահման այլ եղանակներ: Այսպես, Լոռու մարզի Լեռնապար համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն

կատարված այցի արդյունքում պարզ է դարձել, որ շտերով տներից բերվող ջրերից բացի, յուրաքանչյուր օր հաստատության աշխատակիցներն ապակե տարայի մեջ ջուր են հավաքում հաջորդ օրն օգտագործելու համար: Սպիտակի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունում խմելու ջուրը պահվում էր հասարակ դույլի մեջ, իսկ խմելու համար բաժակն ընկղմվում էր դույլում առկա ջրի մեջ: Սույն տվյալները բնականաբար վկայում են ջրի պահման ռիսկային տարբերակների մասին, ինչի արդյունքում նման ջուրը կարող է ինքնին վտանգավոր լինել երեխայի առողջության համար: Այսպես, ըստ Առողջապահության միջազգային կազմակերպության՝ խմելու ջրի որակի վերաբերյալ ուղեցույցի, ջուրը դույլի մեջ պահելը թվարկված է այն մեթոդների ցանկում, որոնք վտանգավոր են անձանց առողջության տեսանկյունից: Ավելին, նշվում է, որ ջուրը կարելի է պահվել դույլում օգտագործումից ընդամենը կես ժամ առաջ⁵¹:

Ուստի, անհրաժեշտ է իրավական ակտով ամրագրել ջրի պահման եղանակը՝ ապահովելով դրա անվտանգ օգտագործման հնարավորությունը:

2.2.3 ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿ

ՀՀ գործող օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ ուսումնական հաստատություններում մատակարարվող ջրի որակի հարցում տարբերակված մոտեցում ցուցաբերված չէ: ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի 67-րդ կետի համաձայն կենտրոնացված ջրամատակարարման համակարգից, այդ թվում՝ հաստատության ջրակուտակիչ տարողություններով կամ հաստատության սեփական աղբյուրից տրվող խմելու ջրի որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանի պահանջներին:

Ջրի որակի ընդհանուր իրավակարգավորումը նախատեսված է ՀՀ առողջապահության նախարարի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանի⁵² 2.1-րդ կետով, համաձայն որի՝ ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակը պետք է համապատասխանի նշված սանիտարական կանոնների պահանջներին:

Նույն հրամանի 3.1-րդ կետը սահմանում է, որ խմելու ջուրը պետք է լինի անվտանգ համաճարակային և ճառագայթային տեսակետից անվնաս քիմիական կազմով և ունենա բարենպաստ զգայորոշական հատկություններ: Որոշման 3.2-րդ կետի համաձայն՝ խմելու ջրի

⁵¹ https://www.who.int/water_sanitation_health/dwq/fulltext.pdf, էջ 64, 107

⁵² Այսուհետ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 876 հրամանի

որակը մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը, ինչպես նաև արտաքին ու ներքին ջրամատակարարման ցանցերի ջրառման կետերում պետք է համապատասխանի նույն որոշման հավելված 1, 2, 3, 4, 5 և 10-ում նշված հիգիենիկ նորմերին:

Այսպես, վերոնշյալ հավելվածներում մանրամասն նկարագրված է ջրում թույլատրելի մանրէաբանական և մակաբուծական ցուցանիշների, հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի և անտրոպոգեն ծագումով նյութերի թույլատրելի սահմանային կոնցետրացիաների, խմելու ջրի մշակման ժամանակ ջրամատակարարման համակարգ ներմուծվող և առաջացող վնասակար քիմիական նյութերի թույլատրելի սահմանային կոնցենտրացիաների, խմելու ջրի զգայորոշական ցուցանիշների նորմերը, խմելու ջրի ճառագայթային անվտանգության նորմերը, խմելու ջրում վնասակար նյութերի պարունակության հիգիենիկ նորմատիվներ, ինչպես նաև խմելու ջրի որակի վերահսկվող ցուցանիշների հաստատման կանոնները:

Հետազոտությունն իրականացվել է այցերի ընթացքում բանավոր հարցադրումների միջոցով, քանի որ հատկապես քաղաքներում ոչ բոլոր դպրոցներն են ընդգրկված խմելու ջրի որակի դիտարկման հսկիչ կետերի ցանկում: Ուսումնական հաստատությունների անձնակազմի հետ անցկացված առանձնազրույցների արդյունքները վկայում են, որ հետազոտության ենթարկված 80 նախադպրոցական կազմակերպությունից 10-ն (13%) ունեն բողոքներ մատակարարվող խմելու ջրի որակի մասին (տե՛ս Աղյուսակ 65):

Խմելու ջրի որակից բողոքներ ունեցող 5 քաղաքային և 5 գյուղական համայնքներում բողոքները հիմնականում վերաբերվել են ջրի զգայորոշական ցուցանիշներին: Ընդ որում՝ գյուղական նախադպրոցական կազմակերպություններում մատակարարվող խմելու ջրի որակի մասին բողոքները կազմում են 17%, իսկ քաղաքայինը՝ 10% (տե՛ս Աղյուսակ 66):

Հետազոտված 121 դպրոցից ջրի որակի նկատմամբ բողոքներ ներկայացվել է 21 դպրոցի անձնակազմի կողմից (17%), որից 14-ը (67%)՝ քաղաքային, 7-ը (33%)՝ գյուղական (տե՛ս նաև Աղյուսակ 18): Ընդ որում՝ ջրի որակի վերաբերյալ բողոքները հիմնականում վերաբերվել են ջրի զգայորոշական ցուցանիշներին⁵³: Օրինակ՝ Դիլիջան քաղաքի դպրոցներ կատարվող այցերի ժամանակահատվածում անձրևում էր, ինչը պատճառ էր դարձել, որ ծորակից հոսող ջուրը ստանար շագանակագույն գունավորում և լիներ պղտոր (Դիլիջանի թիվ 4 և ավագ դպրոցներ, Հաղարծին համայնքի դպրոց): Ըստ դպրոցներից մեկի տնօրենի՝ տեղումների ժամանակ մշտապես առկա է գրանցված իրավիճակը, ինչը ոչ միայն հատուկ է դպրոցին, այլ՝ ամբողջ Դիլիջան քաղաքին: Շիրակի մարզի Մայիսյան համայնքի միջնակարգ դպրոցի ծորակներից, բացելուց հետո գալիս էր դեղին գունավորմամբ պղտոր ջուր (ժանգաջուր), ինչն անցնում էր ջրի որոշ ժամանակ հոսելու պարագայում: Չնայած վերջին նշվածին, չենք կարող հստակ պնդել, որ

⁵³ Ըստ հիշյալ հրամանի՝ զգայորոշական ցուցանիշներն են՝ հոտ (փոխում է ջրի հոտը), գույն (առաջացնում է ջրի գունավորում), փրփ. (առաջացնում է փրփուր), թաղ. (առաջացնում է թաղանթ ջրի մակերեսի վրա), համ (ջրին տալիս է համ), օպ. (առաջացնում է օպալեսցենցիա), պղտ. (առաջացնում է պղտորություն):

ջրի դեղին պղտորումը վերանալուց հետո ջուրը պիտանի էր լինում խմելու համար, հատկապես այն պարագայում, որ նշված դպրոցում ջրի որակի վերաբերյալ ստուգումներ իրականացվում էին դպրոցի տնօրինության կողմից՝ եռամսյակը մեկ: Տվյալ պարագայում ականատես ենք լինում նաև ջրի՝ որպես կարևորագույն ռեսուրսի վատնման, քանի որ խողովակների հնամաշ լինելու պատճառով, յուրաքանչյուր օգտվող ստիպված է լինում մի որոշ ժամանակ բաց թողնել ծորակից հոսող ջուրը:

Վայոց Ձորի մարզի Վերնաշեն համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն կատարված այցի ընթացքում պարզվել է, որ ծորակներից հոսող ջուրը տարաներում հավաքելուց հետո առաջանում է նստվածք, նման իրավիճակ է նաև նույն մարզի Չիվա համայնքի ուսումնական հաստատության պարագայում:

Սույնի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների համադիր ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ միայն Կոտայքի, Լոռու, Արմավիրի մարզերում է իրականացվել վերջիններիս ենթակա հաստատությունների ջրի փորձանմուշների քննություն: Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում Արմավիրի մարզի դպրոցներից և մանկապարտեզներից իրականացվել են խմելու ջրի 119 նմուշի մանրէաբանական և քիմիական հետազոտություն, իսկ 2018 թվականի հունվարից մինչև նոյեմբերի 15-ը՝ խմելու ջրի 121 նմուշի մանրէաբանական և քիմիական հետազոտություն, ինչի արդյունքում շեղումներ չեն արձանագրվել: Կոտայքի մարզպետարանի ենթակայության հաստատություններում ջրամատակարարման համակարգերից ջրի նմուշառումներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս, իսկ խոցելի համայնքներում՝ ամիսը 2 անգամ: Իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքները ամփոփվում են, շեղումներ գրանցած համայնքների ղեկավարներին տրվում են հանձնարարականներ թերությունները վերացնելու ուղղությամբ:

2.2.4 ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Օրենսդրությամբ սահմանված է, որ մի շարք դեպքերում դասասենյակներում պետք է նախատեսվի տաք ջրամատակարարման հասանելիություն: Այսպես, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի N 103-Ն հրամանի 144-րդ կետի համաձայն՝ տաք և սառը ջրամատակարարում պետք է նախատեսվի՝ 1-ից 4-րդ դասարանների դասասենյակներում և երկարօրյա խմբերի սենքերում, գծագրության, կերպարվեստի, տեղեկատվության և էլեկտրոնիկայի կաբինետներում, տեխնիկական մոդելավորման, պատանի բնասերների, գեղանկարչության և քանդակագործության խմբակներում, տնարարության արհեստանոցներում, ուսուցչանոցում, արհեստանոցներում, տեխնիկական անձնակազմի սենյակում, ցնցուղարաններում և անձնական հիգիենայի խցիկներում, կինո և

ֆոտոլաբորատորիաներում, սանհանգույցներում և բժշկական սենքերում, քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներում: Բուֆետում, խոհանոցում և ճաշասրահում տաք և սառը ջրամատակարարում նախատեսվում է տեխնոլոգիական պահանջներից ելնելով:

Ընդ որում՝ տվյալ հրամանի 145-րդ կետով սահմանվում է նաև, որ լվացարանակոնքերի խառնիչներին մատուցվող տաք ջրի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 60 0 C:

«Առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի համաձայն՝ նոր կառուցվող և վերակառուցվող հաստատության 1-4-րդ դասարանների ուսումնական սենքերը, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, նկարչության, տեխնոլոգիայի կաբինետները, ճաշարանի հիմնական սենքերը, ցնցուղարանները, բժշկի կաբինետն ապահովվում են լվացարաններով՝ սառը և տաք ջրամատակարարմամբ (10-րդ կետ): Տվյալ պարագայում ևս իրավական ակտը կարգավորում է նոր կառուցվող և վերակառուցվող հաստատություններում տաք ջրամատակարարման առկայության պահանջները, սակայն դրանով են գնահատվել նաև մինչ իրավական ակտի ընդունումը կառուցված հաստատություններում առկա իրավիճակը: Տրամաբանությունն այն է, որ իրավական կարգավորումները ինքնանպատակ չեն և դրանք չեն կարող ոչ իրավաչափորեն տարբեր լինել տարբեր խմբերի կամ հաստատությունների համար: Այդ կարգավորումները միտված են երեխաների առողջության պահպանմանը: Նշյալ իրավական ակտում մատնանշված տարիքային խմբի երեխաների առողջական առանձնահատկությունները, ինչպես նաև իրավական ակտում նշված դասասենյակներում ջրի օգտագործման հաճախականությունը առաջ են բերում տաք ջրամատակարարման իրական հասանելիության անհրաժեշտություն: Ուստի անհրաժեշտ է գնահատել ամբողջական իրավիճակը, որպեսզի հնարավորություն ստեղծի նաև իրականացնել կարիքների գնահատում և ըստ այդմ, մշակել հստակ գործողություններ, բոլոր հաստատությունները նշված պահանջներին համապատասխանեցնելու համար:

Սույն զեկույցի մշակման շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում մի շարք դպրոցներում տաք ջրամատակարարումն ապահովված չէ: Այսպես, «ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» 2018 թվականի տարեկան զեկույցում ներկայացվում են տվյալներ՝ ըստ դպրոցներում առկա տաք ջրամատակարարման: Համաձայն նշված զեկույցի՝ 1421 դպրոցից 1287-ում տաք ջրամատակարարումը բացակայում է⁵⁴: Ավելին, տվյալները վկայում են, որ որոշ մարզերում բոլոր դպրոցներում է բացակայում տաք ջրամատակարարումը կամ տվյալը չափազանց փոքր: Այսպես, Վայոց ձորում որևէ դպրոցում առկա չէ տաք ջրամատակարարում, իսկ օրինակ՝ Սյունիքի մարզում՝ առկա է միայն 3 դպրոցում⁵⁵: Սակայն հարկ է նշել նաև, որ տաք ջրամատակարարման առկայության պարագայում շատ էին դեպքերը, երբ այն հասանելի էր հաստատության միայն խոհանոցային հատվածում (Գեղարքունիքի մարզի Ճամբարակի

⁵⁴ https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf, էջ 65

⁵⁵ https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf, էջ 104

հիմնական դպրոց): Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 33 նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարության կողմից տրամադրված տվյալների, նշված հաստատությունում տաք ջուր հասանելի է լինում միայն ձմռանը, երբ միացնում են ջեռուցումը: Երևան քաղաքի թիվ 139 նախադպրոցական ուսումնական հաստատությունից տրամադրված տվյալներն էլ փաստում են այն մասին, որ այստեղ տաք ջուր ևս հասանելի է միայն ձմռան ամիսներին:

Սույն զեկույցի մշակման ժամանակ իրականացված այցերը ևս վերահաստատում է վերոնշյալ տվյալը: Այսպես, մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ մշտադիտարկված դպրոցների մեծամասնությունում՝ 86%, տաք ջրամատակարարումը բացակայում է, ընդ որում՝ այս ցուցանիշով քաղաքային և գյուղական դպրոցները գրեթե չեն տարբերվում՝ 88% և 82% (տե՛ս Աղյուսակներ 44,45):

Ինչ վերաբերում է նախադպրոցական ուսումնական հաստատություններին, ապա ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանի 5.1-րդ մասն ամրագրում է, որ տաք ջրամատակարարումն անհրաժեշտ է ապահովել խոհանոցում, լվացքատանը, վաղ հասակի երեխաների (1-ին խումբ) խաղասենյակներում, բոլոր խմբերի բուֆետային մասում և սանհանգույցներում՝ ծորակ-խառնիչների առկայությամբ:

Այսպես, մշտադիտարկված 80 նախադպրոցական կազմակերպությունից 51-ն (64%) ունեցել են վաղ հասակի երեխաների (1-ին խումբ) խաղասենյակներ, որոնցից 63%-ն ապահովված չեն եղել տաք ջրամատակարարմամբ (տե՛ս Աղյուսակ 78): Ընդ որում՝ գյուղական նախադպրոցական կազմակերպությունների 72%, իսկ քաղաքային կազմակերպությունների 58% դեպքերում վաղ հասակի երեխաների (1-ին խումբ) խաղասենյակներում տաք ջրամատակարարում ապահովված չէ (տե՛ս Աղյուսակ 79,80):

Մշտադիտարկված 70 նախադպրոցական կազմակերպությունների 53% դեպքերում բոլոր խմբերի բուֆետային մասերում տաք ջրամատակարարումն ապահովված չէ (տե՛ս Աղյուսակ 82): Միաժամանակ, տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բուֆետային մասերի տաք ջրամատակարարման բացակայությունը առավել տարածված է գյուղական համայնքներում (60%), իսկ քաղաքային բնակավայրերում գրեթե՝ հավասար (49% չունի) (տե՛ս Աղյուսակ 83): Համեմատաբար ավելի վատ վիճակում են գտնվում Արմավիրի (100%), Կոտայքի (75%), Սյունիքի (67%) և Տավուշի (60%) մարզերը (տե՛ս Աղյուսակ 84):

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցներում տաք ջրամատակարարման առկայությունը բխում է երեխայի լավագույն շահի, հիգիենայի, երեխաների առողջության պահպանման տեսանկյունից և չափազանց կարևոր է: Ուստի, խիստ անթույլատրելի է այն, որ մշտադիտարկված 80 նախադպրոցական կազմակերպություններում սանհանգույցների տաք ջրամատակարարման բացակայությունը կազմում է 66% (տե՛ս Աղյուսակ 85): Ընդ որում՝ քաղաքային հաստատություններում՝ 65%, գյուղական՝ 69%: Այսպես, Երևան քաղաքի թիվ 52 նախադպրոցական ուսումնական հաստատության միայն խոհանոցային հատվածում էր առկա տաք ջրամատակարարում: Նույնպիսի իրավիճակ էր նաև Եղեգնաձոր

քաղաքի թիվ 1, Վերնաշեն և Մալիշկա համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Երևան քաղաքի թիվ 72 նախադպրոցական ուսումնական հաստատության բուժետային մասերում թեև տեղադրված են ջրատաքացուցիչ սարքեր, սակայն դրանք չեն աշխատում:

Քաղաքային և գյուղական բնակավայրերում տաք ջրով ապահովվածությունը գրեթե հավասար է (տե՛ս Աղյուսակ 86), իսկ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում ուսումնասիրված նախադպրոցական կազմակերպություններում բացակայում է սանհանգույցների տաք ջրամատակարարումը (100%) (տե՛ս Աղյուսակ 87):

«Առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանի 5.1-րդ մասով նախատեսված պահանջներից է նաև այն, որ նախադպրոցական կազմակերպություններում ցնցուղներին և լվացարաններին միացվող տաք ջուրը պետք է լինի 37⁰-ից ոչ բարձր: Մինչդեռ, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ մշտադիտարկված 80 նախադպրոցական կազմակերպությունից 65% դեպքերում վերոնշյալ պահանջն ապահովված չէ (տե՛ս Աղյուսակ 87.1, 88, 89): Օրինակ, Լոռու մարզի Սպիտակ քաղաքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն կատարված այցի ժամանակ լվացարանին միացված տաք ջուրն այնքան տաք էր, որ հնարավոր չէր ձեռքը պահել դրա հոսքի տակ: Տավուշի մարզի Զորական համայնքի նախակրթական ուսումնական հաստատության աշխատակիցներն էլ ներկայացրել են, որ լվացարանների միացված է մինչև 550 տաք ջուր:

Որպես դրական միտում հարկ է փաստել այն, որ մի շարք հաստատություններ անցել են արևային էներգիայի միջոցով տաք ջրամատակարարման ապահովման գործելաճին: Մասնավորապես, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 3 «Հեքիաթ», Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի, Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություններում տաք ջրամատակարարումն ապահովվում է արևային ջերմատաքացուցիչների միջոցով:

2.2.5 ՀԻԳԻԵՆԻԿ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ. ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանով ամրագրված են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող հիգիենիկ պահանջները: Այսպես, նշված հրամանի 3-րդ գլխով սահմանված են շահագործող հաստատությունների կառուցվածքին, սենքերին, գույքին և սարքավորումներին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որոնք ամրագրված են տվյալ հրամանի 27-32-րդ կետերում: Մասնավորապես, հրամանի 27-րդ կետի համաձայն՝ հաստատության հարկերում տեղակայվում են աղջիկների և տղաների առնվազն մեկական սանհանգույց, որոնց սենքերը պետք է ունենան

ամբողջական մակերեսներ, հատակը՝ սալիկապատ կամ պատված ջրանթափանց այլ ծածկով: Յուրաքանչյուր մասնաշենքում նախատեսվում է անձնակազմի համար սանհանգույց:

Ավելին, 17-րդ կետի համաձայն՝ հաստատության 1-4-րդ դասարանների ուսումնական կառուցահատվածներում նախատեսվում են մեկական սանհանգույց՝ առանձին տղաների և աղջիկների համար:

Կատարված այցի և ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանվել մի իրավիճակ, երբ զուգարանակոնքերը թեև տեսողական առումով գտնվել են սարքին վիճակում, սակայն պարզվել է, որ ջրթող բաքերը գտնվել են անսարք վիճակում (օր.՝ Գյումրու թիվ 9 դպրոց, Մարալիկի թիվ 1 դպրոց, Արմավիրի թիվ 6 դպրոց, Չարենցավան քաղաքի թիվ 4 դպրոց, Երևան քաղաքի թիվ 178 դպրոց) (տե՛ս Լուսանկար 4):

Լուսանկար N4





Ավելին, հրամանի 27-րդ կետի համաձայն՝ հաստատության հարկերում տեղակայվում են աղջիկների և տղաների առնվազն մեկական սանհանգույց, որոնց սենքերը պետք է ունենան ամբողջական մակերեսներ, հատակը՝ սալիկապատ կամ պատված ջրանթափանց այլ ծածկով: Յուրաքանչյուր մասնաշենքում նախատեսվում է անձնակազմի համար սանհանգույց: Նույն հրամանի 17-րդ կետի համաձայն՝ հաստատության 1-4-րդ դասարանների ուսումնական կառուցահատվածներում նախատեսվում են մեկական սանհանգույց՝ առանձին տղաների և աղջիկների համար:

Հետազոտությունը, սակայն, վկայում է, որ ՀՀ-ում ոչ բոլոր դպրոցներում է ապահովված տվյալ պահանջը: Այսպես, մշտադիտարկված 121 դպրոցներից 109-ում (որտեղ առկա են 1-4-րդ դասարաններ) ուսումնասիրվել է սանհանգույցների առկայությունը 1-4-րդ դասարանների ուսումնական կառուցահատվածներում (տղաների և աղջիկների համար նախատեսված մեկական առանձին), որից 41 դպրոցում 1-4-րդ դասարանների համար առանձին սանհանգույցներ նախատեսված չեն (տե՛ս Աղյուսակներ 25-27), ինչը խիստ խնդրահարույց է: Չափազանց կարևոր է նշված նորմի պահպանությունը, քանի որ տարբեր տարիքային խմբերի երեխաների՝ նույն սանհանգույցից օգտվելը կարող է խնդրահարույց լինել երեխաների միջև բռնությունների ռիսկի բարձրացման տեսանկյունից: Ավելին, ներկայացվածը կարող է ծանր հետևանքներ թողնել երեխաների սեռական դաստիարակության և հոգեբանության վրա, խաթարել երեխայի առողջության պահպանման իրավունքի իրացումը:

Ինչ վերաբերում է հաստատության յուրաքանչյուր հարկում աղջիկների և տղաների առնվազն մեկական սանհանգույց տեղակայված լինելու պահանջին, ապա պարզվել է, որ մշտադիտարկված 121 դպրոցի 35% շենքերի յուրաքանչյուր հարկում ըստ սեռերի առանձնացված սանհանգույցներ բացակայում են (տե՛ս Աղյուսակ 28, տե՛ս նաև Աղյուսակ 30): Ընդ որում, մշտադիտարկված գյուղական դպրոցների 52% շենքերի յուրաքանչյուր հարկում առկա չէր անգամ մեկ սանհանգույց (տե՛ս Աղյուսակ 29): Այսպես, Ապարան քաղաքի թիվ 1 դպրոցի միայն առաջին հարկում է նախատեսված առանձին սանհանգույց տղաների և աղջիկների համար: Երևան քաղաքի թիվ 12 դպրոցում տղաների համար նախատեսված է մեկ սանհանգույց, որը գործում է 2-րդ հարկում, իսկ աղջիկների համար՝ 3-րդ հարկում: Նմանատիպ պատկեր է արձանագրվել նաև Երևան քաղաքի թիվ 68 դպրոցում:

Միաժամանակ, մշտադիտարկումը թույլ է տվել արձանագրել նաև, որ մի շարք դեպքերում, թեկուզև դպրոցի յուրաքանչյուր հարկում առանձին տղաների և աղջիկների համար առանձնացված սանհանգույցների առկայությանը, դրանց դռները կողպվում էին, ինչի արդյունքում դրանց շահագործումը փաստացի չէր իրականացվում:

Ավելին՝ մի քանի դպրոցներում եղել են ընդհանուր սանհանգույցներ տղանի և աղջիկների համար (Շիրակի մարզի Մենիամին համայնքի միջնակարգ դպրոց, Շիրակի մարզի Քեթի համայնքի միջնակարգ դպրոցի միայն մեկ մասնաշենքում է գործել սանհանգույց և շուրջ 70 աշակերտ օգտվում է միայն այդ սանհանգույցից, Երևան քաղաքի թիվ 171 դպրոց, Երևան քաղաքի թիվ 114 միջնակարգ դպրոցի 1-ին հարկ):

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ երեխայի անձնական կյանքի գաղտնիության պահպանման տեսանկյունի և բռնությունների բացառման համար է հենց նաև դիտարկվում սանհանգույցների՝ առանձնացված խցիկում տեղադրված լինելը: Այսպես, ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, սեփականատերերի, դպրոցի ղեկավարների, դպրոցի անձնակազմի համար նախատեսված դպրոցի տարածքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցի, Միացյալ թագավորության այն դպրոցներում, որտեղ սանհանգույցներն ընդհանուր են տղաների և աղջիկների համար, հարկ է որպեսզի խստագույնս պահպանվի մարդու անձնական անձեռնմխելիությունը, ինչը կարող է իրականացվել, օրինակ՝ խցիկների բարձր դռների և միջնորմերի տեղադրմամբ⁵⁶:

Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ որոշ դպրոցներում առկա չի եղել անձնակազմի համար առանձնացված սանհանգույց: Օրինակ՝ Արմավիրի մարզում մշտադիտարկված դպրոցներից 75%-ն ապահովված չէ անձնակազմի համար նախատեսված սանհանգույցներով (տե՛ս նաև Աղյուսակ 53-55): Այսպես, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 և Մալիշկա համայնքի հանրակրթական ուսումնական հաստատություններում

⁵⁶ Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, սեփականատերերի, դպրոցի ղեկավարների, դպրոցի անձնակազմի համար նախատեսված դպրոցի տարածքների չափանիշների վերաբերյալ ուղեցույց, Միացյալ թագավորություն, էջ 6:

առկա են եղել անձնակազմի համար նախատեսված սանհանգույցներ՝ առանձնացված տղամարդկանց և կանանց համար: Սակայն հարկ է նշել, որ հանդիպել են դեպքեր, երբ դպրոցում առկա է եղել սանհանգույց միայն անձնակազմի արական սեռի ներկայացուցիչների համար (Երևան քաղաքի թիվ 127 ավագ դպրոց):

Առանձնացված սանհանգույցների բացակայությունը խնդրահարույց է երեխաների շրջանում առկա բռնության դեպքերի ռիսկի ավելացման տեսանկյունից: Հատկապես տարբեր տարիքային խմբերի երեխաների՝ նույն սանհանգույցից օգտագործումը կարող է ռիսկային լինել տարիքով ավելի փոքր երեխաների համար: Ավելին, բավարար իրազեկման պակասի պարագայում բռնության տեսանկյունից կարող է չափազանց ռիսկային լինել նաև դեռահաս աղջիկների և տղաների՝ նույն սանհանգույցից օգտվելը:

ՀՀ քաղաքաշինության նախարարի «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրամանի⁵⁷ 84-րդ կետի համաձայն՝ սանհանգույցներում զուգարանակոնքերը պետք է տեղադրել փակ խցիկներում: Խցիկները միմյանցից պետք է անջատվեն մինչև հատակ 0,2 մ և հատակից ոչ պակաս 1,8մ բարձրությամբ միջնորմ-էկրաններով: Խցիկների հատակագծային չափերը պետք է լինեն 0,8x1.2մ: Աղջիկների համար խցիկներից մեկը պետք է լինի լիարժեք /անձնական հիգիենայի/ 1,8x1,2մ հատակագծային չափերով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Դպրոցներում ջրի, սանիտացիայի և հիգիենայի նվազ ծախսատար չափորոշիչները» վերտառությամբ ուղեցույցում նշվում է, որ բռնության, սեռական ոտնձգության ռիսկերի նվազեցման, ինչպես նաև բավարար գաղտնիության ապահովման համար, սանհանգույցները պետք է լինել ճիշտ տեղակայված այնպես, որ պահպանվի դրանից օգտվողի անվտանգությունն ու գաղտնիությունը: Սանհանգույցի դռները պետք է ներսի կողմից կողավելու հնարավորություն ունենան, իսկ դրանց չօգտագործվելու պարագայում թողնվեն չկողավված, որպեսզի ապահովվի դրանց հասանելիությունը⁵⁸:

Մինչդեռ, այցերի ընթացքում արձանագրվել են մի շարք խնդրահարույց և անթույլատրելի դեպքեր, երբ սանհանգույցներում զուգարանակոնքերը տեղադրված չեն եղել փակ խցիկներում, ինչը ևս խնդրահարույց է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության, սեռական դաստիարակության և հոգեբանական կերտվածքի տեսանկյունից: Ավելին, ներկայացվածն անընդունելի է նաև երեխայի լավագույն շահի տեսանկյունից: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է նաև, որ հաստատությունների սանհանգույցներում

⁵⁷ Այսուհետ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի N 103-Ն հրաման

⁵⁸ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն. «Դպրոցներում ջրի, սանիտացիայի և հիգիենայի նվազ ծախսատար չափորոշիչները», 2009, էջ 23:

զուգարանակոնքերը միմյանցից անջատված չեն եղել նույնիսկ միջնորմերով (տե՛ս
Լուսանկարներ 5-8):

Լուսանկար N5



Լուսանկար N5.1



Լուսանկար N 6



Լուսանկար N 6.1



Լուսանկար N 7



Լուսանկար N 7.1



Լուսանկար N 8



Մի շարք դպրոցներում թեև առկա են եղել միջնորմեր, սակայն բացակայել են դռները (տե՛ս Լուսանկարներ 9 և 10): Օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 38 միջնակարգ դպրոցի սանհանգույցներում առկա են եղել միջնորմեր, սակայն բացակայել են դռները:

Լուսանկար N9



Լուսանկար N 10



Նշված իրավիճակը չափազանց խնդրահարույց է և երեխաների առողջության համար պարունակում է վտանգավոր ռիսկեր: Այս իրավիճակը հղի է բռնության ռիսկով, ոտնահարում է երեխաների արժանապատվությունը և անթույլատրելի անձնական հիգիենայի և սանիտացիայի իրավունքի իրացման տեսանկյունից: Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնագրույցների ընթացքում երեխաները բազմիցս նշել են, որ իրենք խուսափում են սանհանգույցից օգտվելուց: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ վտանգվում է նաև երեխայի առողջությունը:

ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի N 857 հրամանով չի կարգավորվում նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցներում զուգարանակոնքերը փակ խցիկներում տեղադրված լինելու հարցը: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցներում զուգարանակոնքերը տեղադրվում են առանձին խցիկներում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ սանհանգույցների միջև առանձին դռների առկայության հատուկ պահանջ առկա է նաև այլ երկրներում: Այսպես, Իռլանդիայում «Հիմնական դպրոցներում սանիտարահիգիենիկ պայմանների» 2014 թվականի ուղեցույցով սահմանված են տեխնիկական չափորոշիչներ ուսումնական հաստատություններում

սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ⁵⁹: Նշված չափորոշիչներով ևս պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր սանհանգույց պարտադիր ունենա դռներ: Նման օրինակ առկա է նաև Սինգապուրի Հանրապետությունում, որտեղ սանիտարական նորմերով պահանջվում է, որ սանհանգույցները պետք է ունենան դռներ⁶⁰:

Այսպես, Սինգապուրի «Նախադպրոցական ուսումնական հաստատության սանհանգույցի դիզայնի, սպասարկման և կրթության» վերաբերյալ 2014 թվականի ուղեցույցում նշվում է, որ հաշվի առնելով դռների բախման միջադեպերի արդյունքում նախադպրոցական տարիքի անձանց շրջանում պատճառված վնասվածքների մեծ հավանականությունը, դռները պետք է փոխարինվեն վարագույրներով կամ ծալովի դռներով որպես անվտանգության միջոց⁶¹:

Մեկ այլ չափանիշ նախատեսված է Հարավային Ավստրալիայի «Վաղ մանկությանը վերաբերող հարմարությունների» վերաբերյալ ուղեցույցում, որտեղ նշված է, որ նախադպրոցական ուսումնական հաստատության սանհանգույցների խցիկներում պետք է տեղադրվեն գաղտնի դռներ⁶²: Վերոնշյալի կապակցությամբ հարկ է փաստել, որ ուղեցույցում օգտագործվող «գաղտնի դռներ» հասկացությունը ենթադրում է, որ հաստատության զուգարանակոնքերը պետք է միմյանցից անջատված լինեն և տեխնիկական առումով անվտանգ լինեն երեխայի առողջության և կյանքի համար:

Տվյալ հարցն անհրաժեշտ է դիտարկել նաև երեխայի անձնական կյանքի իրավունքի հարգման համատեքստում: Այսպես, ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության, կամ իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության:

Այցերի ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ սանհանգույցներում զուգարանակոնքերը տեղադրված չեն եղել փակ խցիկներում: Ավելին, այստեղ ևս Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է նաև, որ հաստատությունների սանհանգույցներում զուգարանակոնքերը միմյանցից անջատված չեն եղել նույնիսկ միջնորմերով:

Ավելին, սույն զեկույցի մշակման շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ գործնականում սենքերի սարքին լինելու պահանջը ևս լիարժեք պահպանված չէ:

⁵⁹ <https://www.education.ie/en/School-Design/Technical-Guidance-Documents/Current-Technical-Guidance/TGD%E2%80%932-Guidelines-and-Standards-for-Sanitary-Facilities-in-Primary-Schools-1st-Edition-April-2014-.pdf>

⁶⁰ https://www.bca.gov.sg/data/lmgCont/439/05_Sanitary%20Provisions.pdf

⁶¹ <https://www.toilet.org.sg/articles/GuideBetterPreschoolToilet.pdf>

⁶² <https://www.education.sa.gov.au/sites/default/files/early-childhood-facilities-birth-to-age-8-design-standards-and-guidelines.pdf?v=1459296603>

Ինդիի վերաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելու նպատակով հարկ է նշել, որ ուսումնասիրված 121 դպրոցից 26%-ի սանհանգույցների սենքերը չունեն ամբողջական մակերեսներ (տե՛ս Աղյուսակ 31, տե՛ս նաև Աղյուսակ 32-33) (տե՛ս Լուսանկարներ 11-13):

Լուսանկար N11



Լուսանկար N12



Լուսանկար N13



Ավելին, մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ շենքի ներսում չէր գործում սանհանգույց՝ դրսում տեղակայված լինելու պատճառով (տե՛ս Լուսանկարներ 12 և 13): Սույնի վերաբերյալ հարցմանն ի պատասխան տեղեկություն է տրամադրվել ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, ըստ որի՝ վերջինիս ենթակայության տակ գտնվող հետազոտված 74 դպրոցից 3-ն ունի շենքից դուրս գտնվող

սանհանգույց, որոնք ըստ Նախարարության՝ հիմնականում օգտագործվում են որպես պահուստային: Սույն զեկույցի մշակման շրջանակներում ուսումնասիրվել է նաև սանհանգույցների՝ ուսումնական հաստատության շենքից դուրս գտնվելու հարցը: Այսպես, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների ամփոփման արդյունքում կարող ենք փաստել, որ մարզերում գործող բազմաթիվ դպրոցների սանհանգույցներ տեղակայված են ուսումնական հաստատության շենքից դուրս: Ըստ ներկայացված տվյալների՝ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության 118 հանրակրթական ուսումնական հաստատության 13-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս, Արարատի մարզպետարանի ենթակայության 107 դպրոցից 6-ի սանհանգույց գտնվում է դպրոցական շենքից դուրս, 16 դպրոց սանհանգույց ունի և՛ ներսում և՛ դրսում: ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատությունից և համայնքային ենթակայությամբ գործող 61 նախադպրոցական ուսումնական հաստատությունից 31 հանրակրթական ուսումնական և 6 նախադպրոցական հաստատություններում սանհանգույցը գտնվում հաստատության շենքից դուրս: Շիրակի մարզպետարանների ենթակայության 148 ուսումնական հաստատությունից 33-ի սանհանգույցն է գտնվում հաստատությունների շենքերից դուրս: Սյունիքի մարզպետարանի ենթակայության 111 հանրակրթական ուսումնական հաստատությունից 21-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս: Վայոց ձորի մարզում 45 հաստատությունից 10-ի սանհանգույցն է գտնվում շենքից դուրս, իսկ Տավուշի մարզպետարանի ենթակայության 46 հաստատությունից 30-ի սանհանգույցն է գտնվում հաստատության շենքից դուրս:

Այս առումով հարկ է նշել, որ մշտադիտարման ենթարկված այն դպրոցների աշակերտները և տնօրինությունը, որոնց սանհանգույցը տեղակայված է շենքից դուրս, տեղեկացրել են վերջինիս արդյունքում առաջացող անհարմարությունների վերաբերյալ, որոնք հիմնականում առավել ակներև են դառնում ցուրտ եղանակի առկայության պայմաններում:

Ի տարբերություն մարզերի՝ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տվյալների համաձայն՝ վերջինիս ենթակայության ոչ մի հաստատության սանհանգույց չի գտնվում շենքից դուրս:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ևս արձանագրվել է սանհանգույցի՝ դրսում տեղակայված լինելու դեպքեր: Օրինակ, Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքի հանրակրթական ուսումնական հաստատության սանհանգույցը գտնվում է շենքից դուրս (տե՛ս Լուսանկարներ 14 և 15):

Նշվածը չափազանց խնդրահարույց է: Այն առաջին հերթին վտանգավոր է երեխայի առողջության պահպանման տեսանկյունից, քանի որ հատկապես ծմռանը և ցուրտ եղանակին կարող է ռիսկի տակ դնել երեխայի առողջությունը: Բացի այդ, դպրոցից դուրս լինելու և, հետևաբար, ուսուցչական անձնակազմի անմիջական հսկողության ներքո չլինելու

պայմաններում՝ մեծանում է երեխայի՝ երևէ վտանգավոր իրավիճակում հայտնվելու և անգամ նրա նկատմամբ բռնության ռիսկը:

Լուսանկար N14



Լուսանկար N15



Ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի՝ հաստատության զուգարանակոնքերը և մյուս սարքավորումները շահագործվում են սարքին վիճակում: Լվացարանների, զուգարանակոնքերի և միզամանների, ջրի տակառիկների, օդափոխիչ համակարգերի և այլ սարքավորումների անսարքությունները վերացվում են անմիջապես (կետ 28): Մինչդեռ, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկումը վկայում է, որ այս կանոնները գործնականում չեն պահպանվում (տե՛ս Լուսանկար 16):

Լուսանկար N 16



Սարքավորումների անսարքին լինելու խնդիրն առավել ընդգծված է եղել գյուղական համայնքներում տեղակայված ուսումնական հաստատություններում: Այսպես, ուսումնասիրության ենթարկված գյուղական դպրոցների 45% դեպքերում զուգարանակոնքերի և մյուս սարքավորումները սարքին վիճակում չեն գտնվում (տե՛ս Լուսանկար 17):

Լուսանկար N17



Չնայած Երևանի քաղաքապետարանի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, Կրթության և գիտության նախարարությունների կողմից տրամադրվել են տեղեկություններ վերջին տարիների ընթացքում որոշ դպրոցների սանհանգույցների վերանորոգման մասին, այնուամենայնիվ, տրամադրած տվյալները վկայում են, որ վերանորոգումների իրականացման միասնական ժամանակացույց առկա չէ: Այսպես, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ 2017 և 2018 թվականներին վերանորոգվել է նախարարության ենթակայության 32 հանրակրթական ուսումնական հաստատության սանհանգույց, իսկ 2019 թվականին ծրագրվում է վերանորոգել ևս 29 հաստատության սանհանգույց:

Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2017, 2018 թվականների ընթացքում վերանորոգվել է քաղաքապետարանի ենթակայության դպրոցների 230 և մանկապարտեզների 207 սանհանգույց (տե՛ս Լուսանկար 18):

Լուսանկար N18



ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ տարբեր մարզերում իրականացվել և 2019 թվականի ընթացքում ևս նախատեսվում է իրականացնել մի շարք դպրոցների սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ: Օրինակ՝ Արարատի մարզի ենթակայության 107 դպրոցից 2018 թվականի ընթացքում վերանորոգվել է դպրոցների 94 սանհանգույց, իսկ 2019 թվականին նախատեսվում է վերանորոգել կամ կառուցել ևս 129 սանհանգույց: 2017-2018 թվականներին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 111 հաստատությունում վերանորոգվել է 12 սանհանգույց, իսկ 2019 թվականի ընթացքում 26 ուսումնական հաստատությունում ևս

նախատեսվում է իրականացնել սանհանգույցների վերանորոգում: Նշված պատկերը առկա է գրեթե բոլոր մարզերում, սակայն, օրինակ ուշագրավ է Արագածոտնի մարզի ենթակայության հաստատությունների վերաբերյալ տեղեկությունը, ըստ որի՝ 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեով ուսումնական հաստատությունների սանհանգույցների վերանորոգումներ չի նախատեսվում իրականացնել, քանի որ ՀՀ Արագածոտնի մարզի 2019-2021 թվականների քաղաքաշինության բնագավառի միջնաժամկետ ծախսերի ծրագրով /ՄԺԾԾ/ 2019 թվականին նախատեսված դպրոցների կառուցման, հիմնանորոգման ծրագրերը չեն ընդգրկվել ՀՀ 2019 թվականի բյուջեի նախագծում: Սակայն, Արագածոտնի մարզպետարանի ենթակայության դպրոցներում ջրի և սանիտացիոն վիճակի վերաբերյալ տվյալները խոսում են բազում խնդիրների առկայության մասին, իսկ բյուջետային ֆինանսական աջակցության բացակայության արդյունքում՝ առկա վիճակը մոտակա մեկ տարվա ընթացքում դրական առումով չի փոխվելու:

Մի շարք դեպքերում էլ վերանորոգված էին ուսումնական հաստատության ոչ բոլոր սանհանգույցները, և փաստորեն, ամբողջ ծանրաբեռնվածությունն ընկնում էր վերանորոգված սանհանգույցների վրա, քանի որ աշակերտները հարմար էին գտնում օգտվել դրանցից (տե՛ս Լուսանկար 19): Արդյունքում ստացվում է, որ սանհանգույցը ձևական առումով առկա է, բայց անսարքին լինելու պատճառով օգտագործման ենթակա չէ:

Լուսանկար N19



Այսպես, Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 1 դպրոցի երեք հարկանի շենքի միայն վերջին հարկի սանհանգույցն է ուսումնասիրության ընթացքում եղել վերանորոգված, ինչի արդյունքում, օրինակ՝ առաջին հարկում գտնվող աշակերտը նախընտրում են բարձրանալ երրորդ հարկ՝ օգտվելու բարեկարգ սանհանգույցից:

2.2.6 ՀԻՓԻԵՆԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի՝ հաստատության զուգարանների սենքերը և սարքավորումները պահվում են մաքուր վիճակում, ապահովվում են հեղուկ օճառով, ձեռքերի չորացման համար էլեկտրական սարքերով կամ

թղթյա միանվագ օգտագործման սրբիչներով, զուգարանի թղթով: Ճանճերից պաշտպանվելու համար, զուգարանների սենքերի լուսամուտների օդանցքները ցանցապատվում են (կետ 29):

Այսպես, հարկ է նշել, որ այցերի ընթացքում շատ փոքրաթիվ հաստատություններում են հանդիպել ձեռքերի չորացման համար էլեկտրական սարքերով կահավորված սանհանգույցներ (տե՛ս Լուսանկար 18):

Լուսանկար N 18



Նման օրինակ է Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի ավագ դպրոցը, որի սանհանգույցը կահավորված էր այդպիսի սարքով:

Մշտադիտարկված 121 դպրոցից 71%-ի սանհանգույցների սենքերը և սարքավորումներն ապահովված չեն հեղուկ օճառով (տե՛ս Աղյուսակ 46, տե՛ս նաև Աղյուսակներ 47-48), 76%-ի սանհանգույցների սենքերն ապահովված չեն զուգարանի թղթով (տե՛ս Աղյուսակ 49, տե՛ս նաև Աղյուսակ 50), իսկ ձեռքերի չորացման համար էլեկտրական սարքերով կամ թղթյա միանգամյա օգտագործման սրբիչներով ապահովված են ընդամենը դպրոցների 7%-ի սանհանգույցների սենքերը (տե՛ս Աղյուսակ 51):

Սույն նորմերն ապահովում են սանիտացիոն ծառայությունների հասանելիությունը և դրանք անձնական հիգիենայի համար անհրաժեշտ տարրական պարագաներ են: Դրանց բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ տարբեր վարակների տարածման՝ դրանով իսկ վնասելով երեխաների առողջությունը:

Սանիտացիոն հասանելիության տեսանկյունից խնդրահարույց նման ցուցանիշների գրանցումը կապված է մի շարք պատճառների հետ: Հաստատություններ իրականացված այցերի ընթացքում ղեկավարության կողմից բացի ֆինանսատնտեսական ապահովության բացակայության խնդիրը, նշվել է նաև, որ երեխաները փչացնում են ձեռքերի չորացման համար

նախատեսված էլեկտրական սարքերը, վատնում են զուգարանի թուղթը և հեղուկ օճառը, մի շարք դեպքերում դրանք տանում են տուն: Տնօրենների հետ անցկացված մի քանի առանձնազրույցների ընթացքում էլ վերջիններս խոստովանել են, որ տեղյակ չեն եղել վերը նշված պահանջների մասին, ուստիև սանհանգույցներն ապահովված չեն եղել, օրինակ՝ հեղուկ օճառով, զուգարանի թղթով կամ լուսամուտների օդանցքներից բացակայել է ցանցը (տե՛ս Լուսանկար 19):

Լուսանկար N19



Վերոնշյալը հնարավորություն է տալիս փաստել, որ բացի ֆինանսական ապահովության բացակայությունը, սանիտացիոն հասանելիության իրավունքի իրացումը կաթվածահար է լինում

աշակերտների՝ տեղեկացվածության և հիգիենիկ դաստիարակության պակասի, իսկ որոշ դեպքերում նաև հաստատության ղեկավար անձնակազմի օրենսդրական կարգավորումների մասին իրազեկ չլինելու պատճառով:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցներում առկա է նաև մաքրության պակասի խնդիր (տե՛ս Լուսանկար 20):

Լուսանկար N20



Արդյունքում, այցերի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ սանհանգույցների հատակը բավականին կեղտոտ է եղել: Ավելին, մաքրման գույքը և ախտահանիչ լուծույթները նույնպես գտնվել են սանհանգույցներում և պահված չեն եղել առանձին սենքում կամ պահարանում:

Որոշ դեպքերում դպրոցի անձնակազմը սեփական միջոցներով է ապահովվում մաքրությունը: Այսպես, Ալավերդի քաղաքի թիվ 5 ավագ դպրոցում նշել են, որ դպրոցի մաքրության համար օգտագործվող քլորն իրենք են գնում սեփական միջոցներով:

«Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.iii.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857 հրամանի⁶³ 3.8-րդ մասի համաձայն՝ միջին և ավագ մսուրային խմբերի համար զուգարաններում դրվում են 2 մանկական լվացարան, 1 մեծահասակի և 1 մանկական զուգարանակոնք (հիգիենիկ վրադիրով), ջրիոս հարմարանք, ջրացնցուղային տակնոց, ցածր մսուրային խմբի զուգարանում՝ 1 սրբիչ: Իսկ ընդունարանում և խաղասենյակում տեղադրվում է լվացարան արմնկաձև խառնիչով:

Այսպես, մշտադիտարկված 80 նախադպրոցական կազմակերպություններից 76-ն (95%) ունեցել են միջին և ավագ մսուրային խմբեր: Նշված հաստատություններում իրականացված հարցումների 72% դեպքերում սանհանգույցներն ապահովված են մանկական լվացարաններով (տե՛ս Լուսանկար 21):

Լուսանկար N21



⁶³ Այսուհետ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրաման

Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ գյուղական բնակավայրերում (38%) և հատկապես Սյունիքի (67%), Տավուշի (46%), Արագածոտնի (50%) և Արարատի (50%) մարզերում մանկական լվացարանների չապահովվածության ցուցանիշը ավելի բարձր է (տե՛ս Աղյուսակ 97,98):

Մշտադիտարկված 76 միջին և ավագ մսուրային խմբեր ունեցող նախադպրոցական կազմակերպություններից 47% դեպքերում են սանհանգույցներն ապահովված եղել մանկական զուգարանակոնքով (հիգիենիկ վրադիրով) (տե՛ս Աղյուսակ 99) (տե՛ս Լուսանկար 22):

Լուսանկար N22



Ցուցանիշը կարևոր է նախադպրոցական տարիքի երեխաների սանիտարահիգիենիկ պայմանների հասանելիության տեսանկյունից: Քաղաքային բնակավայրերում մանկական զուգարանակոնքերի բացակայությունը (56%) գյուղական բնակավայրերի (44%) համեմատ ավելի բարձր է, իսկ Սյունիքի (100%), Տավուշի (64%), Գեղարքունիքի (62%) Լոռու (56%) մարզերում և Երևան քաղաքում (64%) ավելի տարածված (տե՛ս Աղյուսակ 100):

Գրեթե համատարած երևույթ կարելի է համարել այն, որ մի շարք նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցներ թեև ապահովված էին մանկական զուգարանակոնքով, սակայն, բացակայում էր դրա վրայի հիգիենիկ վրադիրը: Դրա բացակայության վերաբերյալ հարցին ի պատասխան, տվյալ հաստատության ներկայացուցիչները տեղեկացնում էին, որ հիգիենիկ վրադիրները հանվում են վարակների տարածումը կանխելու համար, ինչպես նաև դրանք շուտ են կոտրվում:

Մի շարք հաստատություններում գրանցվել են դեպքեր, երբ թեև սանհանգույցում տեղադրված չեն եղել մանկական զուգարանակոնքեր, այնուամենայնիվ, իրականացվել են քայլեր դրանք երեխաների համար հարմարեցնելու ուղղությամբ: Այսպես, օրինակ՝ Տավուշի

մարզի Հաղթանակ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունում տեղադրված զուգարանակոնքերի ներքևի հատվածում տեղադրվել են քարե սալիկներ, այդպիսով կրճատելով սանհանգույցի հատակի և զուգարանակոնքի վրադիրի միջև ընկած տարածությունը: Նմանատիպ լուծում էր տրված նաև Նոյեմբերյան քաղաքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունում (տե՛ս Լուսանկար 23):

Լուսանկար N23



Պարզվել է նաև, որ մշտադիտարկված 76 միջին և ավագ մսուրային խմբեր ունեցող նախադպրոցական կազմակերպություններից միայն 29% դեպքերում են սանհանգույցներն ապահովված եղել ջրիոս հարմարանքով, անհատական սրբիչով (տե՛ս Լուսանկար 24):

Լուսանկար N 24



Մինչդեռ, գյուղական նախադպրոցական կազմակերպություններում 42% դեպքերում բացակայում է ջրի հարմարանք (տրապ) և սրբիչ (տե՛ս Աղյուսակ 101, տե՛ս նաև Աղյուսակ 102): Ցուցանիշը կարևոր է լվացման և հիգիենայի տեսանկյունից:

Հատուկ պետք է առանձնացնել Լոռու մարզի Ամրակից համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունում առկա սանիտացիոն և ջրի հասանելիության վիճակը: Մանկապարտեզն ուներ միայն մեկ սանհանգույց, որը տեղակայված է հաստատության դրսում: Այն իրենից ներկայացնում էր փայտաշեն փոքր տնակ, առանց կեղտաջրերի հեռացման համակարգի (տե՛ս Լուսանկար 25.1): Ցանկության դեպքում անգամ հնարավոր չէր լինի պահպանել մաքրություն և հիգիենայի կանոնները: Տվյալ սանհանգույցից օգտվում էին նախադպրոցական ուսումնական հաստատության թե՛ աղջիկ, թե՛ տղա սաները և աշխատակիցները: Մանկապարտեզում չկար լվացարան՝ առկա էր միայն մեկ ծորակ, իսկ աշխատակիցների պնդմամբ՝ երեխաները լվացվում էին շտերում հավաքվող ջրից՝ հաստատությունից դուրս (տե՛ս Լուսանկար 25.2):

Լուսանկար N25.1





Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանի 3.8-րդ մասի համաձայն՝ կրտսեր 2-րդ և միջին խմբերում տեղադրվում են 4 մանկական լվացարան, 3 մանկական զուգարանակոնք, միջնապատով առանձնացված խցիկներում ցնցուղի տակդիր, ճկուն փողրակով (շլանգ) ցնցուղ և 1 սրբիչ:

Մշտադիտարկված հաստատություններում մանկական լվացարանների ապահովվածությունը կազմում է 91%, իսկ մանկական զուգարանակոնքերինը՝ 90% (տե՛ս նաև Աղյուսակ 103-106): Մշտադիտարկված 68 կրտսեր 2-րդ և միջին խմբեր ունեցող նախադպրոցական կազմակերպություններից 16-ի (76%) խմբերի սանհանգույցները ապահովված են ճկուն փողրակով ցնցուղով և սրբիչով: Մինչդեռ, քաղաքային նախադպրոցական կազմակերպություններում ճկուն փողրակով ցնցուղի և սրբիչի բացակայությունը կազմում է 81%, իսկ գյուղական նախադպրոցական կազմակերպություններինը՝ 65% (տե՛ս նաև Աղյուսակ 107): Ավելին, կրտսեր 2-րդ և միջին խմբերի սանհանգույցների ճկուն փողրակով ցնցուղի բացակայության խնդիրը առկա է ողջ Հայաստանի Հանրապետության տարածքում 50% և ավելի արտահայտվածությամբ (տե՛ս

Աղյուսակ 108): Ցուցանիշը կարևոր է սանիտարական պայմանների հասանելիության և հիգիենայի տեսանկյունից (տե՛ս Լուսանկար 26):

Լուսանկար N25



Թեև ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանով սահմանված չէ, որ հաստատության սանհանգույցներն ապահովվում են հեղուկ օճառով, ինչպես օրինակ նշված է հանրակրթական ուսումնական հաստատությունների համար ՀՀ առողջապահության նախարարի N 12-Ն հրամանի 29-րդ կետով, այնուամենայնիվ մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել է նաև այդ ցուցանիշը: Արդյունքում, գրեթե բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններում արձանագրվել է հեղուկ օճառի առկայությունը: Հաստատություններում իրականացված մշտադիտարկման ժամանակ արձանագրվել են նաև դեպքեր, երբ հաստատությունների սանհանգույցներում տեղադրված է եղել օճառ (ոչ հեղուկ), որը խնդրահարույց է անձնական հիգիենայի և վարակների տարածման տեսանկյունից:

Մեծերի և նախապատրաստական խմբերում շատ հաճախ առկա չէին լինում աղջիկների և տղաների համար առանձնացված զուգարաններ: Լոռու մարզի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն կատարված այցի ընթացքում պարզ է դարձել, որ այստեղ ևս մեծերի և նախապատրաստական խմբերում շատ հաճախ առկա չէին լինում աղջիկների և տղաների համար առանձնացված զուգարաններ առկա չէին, ինչի վերաբերյալ մանկապարտեզի ղեկավարությունը տեղեկացրեց, որ երեխաները զուգարանից օգտվում են ըստ սեռերի՝ հերթով: Ստացվում է, որ նկարագրված իրավիճակում չի ապահովվում ջրի և սանիտացիայի մշտական հասանելիությունը յուրաքանչյուր երեխայի համար, ինչը հակառակ համեմատական է վերջինիս լավահույն շահի սկզբունքի պահպանմանը:

Ըստ այդմ, անհրաժեշտ է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանում կարգադրել փոփոխություն՝ հարակ կարգավորումներ նախատեսելով

նախադպրոցական ուսումնական հաստատությունում սանհանգույցներում հեղուկ օճառի առկայության վերաբերյալ:

2.2.7 ԶՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցով նախատեսվում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույցների համար սահմանված չափորոշիչները ներառում են թեքահարթակ, լայն դուռ, ներսում բավականաչափ տարածք անվասայլակով տեղաշարժման համար, հարմարեցված զուգարանակոնք և բռնակներ⁶⁴: Նման օրինակ սահմանվում է նաև Միացյալ Թագավորության դպրոցների համար սահմանված չափորոշիչներով (կիրառելի են նաև համայնքային կենտրոնների, հատուկ դպրոցների և այլ հաստատությունների համար), որոնց համաձայն՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար զուգարաններում պետք է բացառվեն աստիճանները և այլ խոչընդոտները, իսկ զուգարանները պետք է լինեն այնպիսի վայրում, որ երեխաները ստիպված չլինեն անցնել 40 մետրից ավել տարածք⁶⁵:

ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 24-րդ հոդվածը 1-ին մասը սահմանում է, որ մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Այս իրավունքն առանց խտրականության և հավասար հնարավորություններով իրականացնելու համար մասնակից պետություններն ապահովում են կրթության բոլոր ոլորտները ներառող համակարգը բոլոր մակարդակներում, ինչպես նաև կրթությունը՝ ամբողջ կյանքի ընթացքում: Նույն հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի լինեն ընդհանուր բարձրագույն կրթությունը, մասնագիտական կրթությունը, մեծահասակների ուսուցումը և կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում: Այս նպատակով մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվեն անհրաժեշտ հնարավորություններ:

Ըստ այդմ, ՀՀ կառավարության 2010 թվականի N 1334-Ն որոշման հավելվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունը պետք է ապահովված լինի շուրջօրյա հոսող խմելու ջրով, բոլոր հարկերում առկա լինեն տղաների և աղջիկների համար առանձնացված վերանորոգված սանհանգույցներ, *իսկ հաշմանդամություն ունեցող անձանց համար՝*

⁶⁴ https://www.who.int/water_sanitation_health/publications/wash_standards_school.pdf

⁶⁵ https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/410294/Advice_on_standards_for_school_premises.pdf

հարմարեցված սանհանգույց, որի մոտ անհրաժեշտ է հաշմանդամության տարբերանշանի առկայություն (20-րդ կետի, 3-րդ ենթակետի «ժա» պարբերություն):

Իրավասու պետական մարմինների տրամադրած տվյալները, ինչպես նաև սույն զեկույցի կազմման համար իրականացված ուսումնասիրությունները վեր են հանում մտահոգիչ պատկեր, քանի որ հաստատությունների մեծամասնությունը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Այսպես, Կրթության և գիտության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ՝ նախարարության ենթակայության 74-ից 20 ուսումնական հաստատության սանհանգույց հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց համար, սակայն, Նախարարության կողմից չի վարվում ըստ հաշմանդամության տեսակների վիճակագրություն, ուստի հստակ չէ, թե տվյալ սանհանգույցները հարմարեցված են հենաշարժողական, թե տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2018 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի ենթակայության 76 դպրոցից միայն 4-ի սանհանգույցն է հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար: Լոռու մարզպետարանի ենթակայության 149 հանրակրթական ուսումնական հաստատությունից հաշմանդամություն ունեցող, ներառյալ՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար մարզային ենթակայության միայն 25 ուսումնական հաստատությունում առկա է հարմարեցված սանհանգույց: Կոտայքի մարզպետարանի ենթակայության 90 հանրակրթական ուսումնական հաստատությունից 3-ն են հարմարեցված հաշմանդամություն ունեցող, ներառյալ՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար, իսկ Սյունիքի մարզպետարանի ենթակայության 111 հաստատությունից 5-ի սանհանգույցն է մասամբ հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար: Առավել մտահոգիչ պատկեր է Արագածոտնի, Վայոց ձորի և Արարատի մարզպետարանի ենթակայության ուսումնական հաստատություններում, որտեղ ընդհանրապես չկան սանհանգույցներ, և դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող, ներառյալ՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Սույն զեկույցի պատրաստման ընթացքում մշտադիտարկված 121 դպրոցից միայն 8-ում են առկա հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ (տե՛ս Աղյուսակ 52): Չնայած դրանց առկայությանը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ որոշ դեպքերում տվյալ սանհանգույցների մուտքերը և սակավաշարժուն խմբերի երեխաների համար առաջացնելու էին ինքնուրույն օգտվելու հետ կապված խոչընդոտներ, օրինակ՝ մուտքի դռան շրջանակը հատակի մակերևույթի նկատմամբ ուներ որոշակի բարձրություն:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ մշտադիտարկված 80 նախադպրոցական կազմակերպությունից միայն 2-ի (3%) սանհանգույց է հարմարեցված եղել հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար, որը շատ կարևոր է հավասար սանիտարահիգիենիկ պայմանների տեսանկյունից (տե՛ս Լուսանկարներ 26-30):

Լուսանկար N26



Լուսանկար N27



Լուսանկար N28



Լուսանկար N29



Λοιωνήλαρ N30



Լոռու մարզի Վանաձորի թիվ 19 դպրոց կատարված այցի ժամանակ ստացվել է տեղեկություն այն մասին, որ դպրոցում սովորում է հենաշարժողական խնդիրներ ունեցող 1 երեխա, սակայն այս դպրոցը ևս հարմարեցված չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նկարագրված դեպքը հիշատակման է արժանի, քանի որ ստացված տեղեկության համաձայն՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտին սանհանգույցից օգտվելու հարցում օգնում է մայրը, ով աշխատում է դպրոցի բուժետում: Մեկ այլ դեպքում Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի միջնակարգ դպրոցի ասիական տիպի զուգարանը մատչելի չէր դպրոցում ուսանող հաշմանդամություն ունեցող աշակերտի համար, ում սանհանգույցից օգտվելիս օգնում էին իր դասընկերները:

Նմանատիպ դեպքի մասին տեղեկություններ են տրամադրվել նաև Վանաձոր քաղաքի թիվ 3 հիմնական դպրոցում, որի սանհանգույցները ևս հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Այս դպրոցում ևս սովորում է հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխա, ում սանհանգույցից օգտվելու հարցում օգնում են ծնողները կամ ուսուցիչները:

Ինչ վերաբերվում է Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հաստատություններին, ապա հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված է 45-ը (տե՛ս Լուսանկար 26):

Լուսանկար N31



Հարկ է նշել նաև, որ ուսումնասիրության ենթարկված թե՛ հանրակրթական, թե՛ նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված սանհանգույցների առկայության մասին հարցի վերաբերյալ շատ

դեպքերում ստացվում էր պատասխան առ այն, որ հաստատությունում հաշմանդամություն ունեցող երեխա չի ուսանում: Վերջին նշվածը ևս մեկ անգամ ապացուցում է հաստատությունների ղեկավարները տեղեկացվածության բացակայությունը:

2.4 ՋՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍ

Երևանի քաղաքապետարանի, Կրթության և գիտության նախարարության և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության վկայում են, որ ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ պարբերական բնույթ կրող միասնական և տարբերակված վիճակագրություն չի վարվում:

Այսպես, Կրթության և գիտության նախարարության ենթակայության ներքո գործում են միայն հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ թվով 132: Հարկ է նշել, որ նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության, վերջինիս՝ իրավական ակտերով սահմանված կարգավորումների համապատասխանության վերաբերյալ դիտարկումները կատարվում են ընդհանուր՝ շենքային և մյուս կոմունալ խնդիրների համատեքստում, առանց ժամանակահատվածների սահմանման, ինչպես նաև կոնկրետ անհրաժեշտություն առաջանալու դեպքերում: Այսինքն, նախարարության կողմից չի իրականացվում մշտադիտարկում, չի վարվում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ կենտրոնացված վիճակագրություն: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ յուրաքանչյուր հաստատություն ներկայացրել է սեփական տվյալները, ընդ որում, ստացվել է 74 դպրոցի տվյալ, իսկ մնացած 58 հաստատության տվյալները նախարարության կողմից առաջարկվել է ներկայացնել ըստ անհրաժեշտության: Թեև ներկայացված 74 դպրոցի վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունը կարող է ապահովել որոշակի պատկերացում նախարարության ենթակա դպրոցներում առկա վիճակի մասին, սակայն, հարկ է նշել, որ մշտադիտարկումների իրականացման և միասնական վիճակագրության վարման պարագայում նախարարությունը ևս հնարավորություն կունենա ստանալու հստակ պատկեր հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վիճակի վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ ջրի և սանիտացիայի հասանելիության և այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ գործիքակազմի վերաբերյալ ըստ առանձին գյուղական և քաղաքային վայրերում գործող հաստատությունների տարբերակված վիճակագրություն ևս չի վարվում:

Ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ տարբերակված վիճակագրություն չի վարվում նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից: Այս մասին է վկայում նաև տարբեր մարզպետարանների տրամադրած տվյալները: Այսպես, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացված այն հարցին, թե արդյոք ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ հարցերով վարվում է տարբերակված վիճակագրություն, այն է, առանձին գյուղական և քաղաքային վայրերում գործող հաստատությունների համար, դրական պատասխան տրամադրվել է միայն Շիրակի մարզպետարանից, իսկ մյուս մարզերի դեպքում կամ համապատասխան տեղեկությունը բացակայել է կամ եղել է բացասական: Փաստորեն, վերը նշված խնդիրը կրում է համակարգային բնույթ, քանի որ Երևանի քաղաքապետարանի կողմից ևս չի վարվում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ տարբեր չափանիշներով տարբերակված վիճակագրություն:

Ավելին, տեսչական մարմինների վերակազմակերպման գործընթացի պատճառով տեղեկատվությունը միասնական ձևով հասանելի չի դարձվել նաև այդ պարագայում: Այսպես, վերջին տարիների ընթացքում տեսչական մարմնի կողմից հանրակրթական և նախակրթական ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ ամրագրված ջրամատակարարման և սանիտարական կանոնների վերաբերյալ ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ համակարգային և լայնածավալ ստուգումներ չեն իրականացվել:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 839-Ա որոշմամբ 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը տեսչական ստուգումները կասեցվել են: Միաժամանակ, նշյալ որոշմամբ սահմանվում է, որ 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինների կողմից, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների, ինչպես նաև «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված տեսչական մարմինների ստուգումները կարող են իրականացվել միայն՝

- 1) պետական կառավարչական հիմնարկներում, պետական ոչ առևտրային կամակերպություններում, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, 100 տոկոս պետական բաժնետնասով փակ բաժնետիրական ընկերություններում և 100 տոկոս համայնքային բաժնետնասով փակ բաժնետիրական ընկերություններում.
- 2) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում.
- 3) տնտեսավարող սուբյեկտների գրավոր դիմումի հիման վրա.
- 4) մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումների.

5) հանրային անվտանգության, անձանց իրավունքների, կյանքի և առողջության պաշտպանության, պետության պաշտպանության և անվտանգության ապահովման դեպքերում (համապատասխան հիմնավորումներով)՝ միայն Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր համաձայնությամբ.

6) սույն որոշման հավելվածով հաստատված տեսչությունների ստուգումների ստուգաթերթերով՝ ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ:

Մինչդեռ, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը վերակազմավորվել է առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի⁶⁶, որն իրականացնում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետական սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը, որը ներառում է տնտեսավարող սուբյեկտների կողմից (բացառությամբ սննդամթերքի և ոչ պարենային արտադրանքի անվտանգության բնագավառների օրենսդրության պահանջների) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման ու սանիտարահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև տեսչական մարմնի լիազորություններից է մարդու կյանքին և առողջությանն էական վտանգ սպառնացող խախտումների արձանագրման արդյունքում օրենքով սահմանված դեպքերում և կարգով ուսումնական և կրթական հաստատությունների, առողջապահական և մշակութային օբյեկտների գործունեությունը կասեցնելու մասին կարգադրագիր տալը՝ մինչև սանիտարական նորմերի ու կանոնների, հիգիենիկ նորմատիվների և հակահամաճարակային ռեժիմների արձանագրված խախտումները վերացնելը:

«Հայաստանի հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ բոլոր ստուգումները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողությունը, *անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը*: Մինչդեռ, ոլորտի օրենսդրական կարգավորումների

⁶⁶ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=123789>

ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ համապատասխան ստուգաթերթերը դեռևս չեն հաստատվել:

Անհրաժեշտ է ընդգծել, որ դեռևս գործում է 2013 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից անցկացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 349-Ն որոշումը: Բայցևայնպես նոր տեսչական մարմնի կողմից ստուգումների իրականացման համար նոր ստուգաթերթ հաստատված չէ:

Ավելին, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը ստուգում իրականացնող մարմնի ինտերնետային կայքում պարտադիր տեղադրվում է նաև վերջինիս կողմից նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվությունը, որում նշվում է հաշվետու ժամանակաշրջանում ստուգված և (կամ) ուսումնասիրված յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի անվանումը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), տեղեկություններ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի մոտ անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների քանակի և հիմքերի վերաբերյալ: Այստեղ ևս առկա է համակարգային խնդիր: Տեսչական մարմինների վերակազմակերպման արդյունքում ձևավորված նոր՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը 2019 թվականի հունվարի 30-ի դրությամբ դեռևս չունի ինտերնետային կայք, ինչի արդյունքում էլ ստուգումների վերաբերյալ տվյալները հասանելի չեն հասարակությանը:

Արդյունքում, նշվածը թույլ է տալիս արձանագրել, որ խնդիրը համակարգային առումով լուծված չէ, քանի որ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար սանիտարական կանոնների և նորմերի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար բացակայում են անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:.

Ելնելով վերոգրյալից և այն հանգամանքից, որ փարբեր չափանիշների վրա փարբերակված վիճակագրությունն անհրաժեշտ է ինչպես ոլորտի ամբողջական պատկերն իմանալու, այնպես էլ խնդիրները և լուծման ենթակա հարցերը վեր հանելու համար՝

1.անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ փարածքային կառավարման և զարգացման նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը վարեն ջրի և սանիտարացիայի հասանելիության փարբերակված վիճակագրություն՝ հիմնված փարբեր չափանիշների վրա,

2. անհրաժեշտ է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «www.emis.am» կայքում առկա «Դպրոցների էլեկտրոնային անձնագրերի քարտեզ»

բաժնում ավելացնել յուրաքանչյուր դպրոցում ջրի և սանիտացիոն հասանելիության և մատչելիության վերաբերյալ տեղեկություններ,

3. անհրաժեշտ է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «www.emis.am» կայքում հասանելի դարձնել նախադպրոցական կրթական հաստատությունների վերաբերյալ տվյալները:

Ավելին, պետության կողմից հավաքագրված ոլորտում համապարփակ ուսումնասիրության և միասնական, ինչպես նաև սեգրեգացված (օրինակ՝ ըստ մարզերի, գյուղական համայնքների, դպրոցների մեծության) առկա վիճակագրական տվյալների պակասը թույլ է տալիս ենթադրել, որ անհրաժեշտ է ոլորտում իրականացնել ուսումնասիրություն առկա բոլոր խնդիրների և դրանց առաջացման պատճառների հստակ նախանշման համար: Ավելին, ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր ընդունվել և/կամ փոփոխվել են վերջին տարիներին, օրինակ՝ 2014 և 2017 թվականներին և վերաբերում են նոր կառուցվող կամ վերակառուցվող հաստատություններին: Ինչի արդյունքում զգալի տարբերություն է նկատվում նոր կառուցվող և մինչև այդ նորմերի ընդունումը կառուցված հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության մակարդակների միջև: Նշված իրավիճակը բնականաբար անթույլատրելի, քանի որ երեխայի առողջության պահպանումը պետք է ապահովված լինի նույն մակարդակներում և հիմնված լինի երեխայի լավագույն շահի սկզբունքի վրա: Ուստի անհրաժեշտ է նաև հատուկ գնահատում իրականացնել այն հաստատությունների վերաբերյալ, որոնք կառուցվել են մինչև նորմերի թարմացումը:

Գործողությունների ծրագիրն անհրաժեշտ է, որպեսզի դրանում նախանշվի ոլորտում խնդիրների լուծման ժամանակացույցը և առաջնահերթությունները: Գործողությունների ծրագիրը կապահովի շարունակական և միասնական քայլերի ձեռնարկում:

Վերոնշյալ գործոնները թույլ կտան նաև մշակել գործողությունների ծրագիր, որն ուղղված կլինի հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության մակարդակի բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կապահովի երեխաների առողջության պահպանությունը և կնպաստի երեխաների՝ կրթության իրավունքի իրացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. համակարգային ուսումնասիրության ենթարկել բոլոր հաստատություններում (այդ թվում մինչև համապարասխան նորմերի փոփոխությունը կառուցված և վերակառուցված) այսօրվա դրությամբ գործող նորմերին համապարասխանությունը,

2. մշակել գործողությունների ազգային ծրագիր, որը կհաստատվի կառավարության որոշմամբ և որը կնախատեսի միջոցառումներ առ այն, որպեսզի հստակ նշված ժամանակացույցում բոլոր հաստատությունները համապարասխանեցվեն գործող նորմերին,

3. գործողությունների ազգային ծրագրում ներառել նաև այլ միջոցառումներ՝ ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության բարձրացման ուղղությամբ:

Ընդ որում, անհրաժեշտ է ներդնել հատուկ մեխանիզմ, որը կիրականացնի պարբերական և մշտական մշտադիտարկում՝ նորմերի յուրաքանչյուր փոփոխության պարագայում նախանշելով հաստատություններում համապատասխան գործողությունների անհրաժեշտությունը:

Մշտադիտարկման արդյունքում պարզվել է նաև, որ նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջների չապահովվածության խնդիրը ոչ միայն հատկացված ֆինանսական միջոցների անբավարարության, այլ նաև նախադպրոցական կազմակերպությունների համար ներպետական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների մասին իրազեկվածության պակասի արդյունք է: Մասնավորապես, հաստատություններում իրականացված հարցումների արդյունքում արձանագրվել է, որ հաստատության անձնակազմը պատշաճ կերպով իրազեկված չէ մանկական նախադպրոցական օբյեկտների կառուցվածքի, գույքով ու սարքավորումներով ապահովման վերաբերյալ նորմատիվային դրույթների և դրանց չկիրառման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների մասին:

Հաշվի առնելով անձնական հիգիենայի դերը երեխաների առողջության պահպանման գործում՝ էական նշանակություն ունի անձնական հիգիենայի կանոնների մասին իրազեկումը:

Այսպես, հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված հետազոտությունների և անձնակազմի հետ անցկացված հարցազրույցների արդյունքում արձանագրվել է, որ աշակերտների շրջանում առկա է անձնական հիգիենայի կանոնների մասին ոչ բավարար իրազեկվածություն: Մասնավորապես, անձնակազմին ներկայացված հարցերին ի պատասխան, վերջիններս նշում էին, որ առկա թերացումները տեղի են ունեցել աշակերտների կողմից: Օրինակ՝ հաստատությունների աշխատակիցների փոխանցմամբ աշակերտները վատնում կամ փչացնում են սանհանգույցներում տեղադրվող զուգարանի թղթերը կամ օճառները:

Նախ, ուսումնական հաստատություններում անձնական հիգիենայի կանոնների պահպանման նպատակով չափազանց կարևոր է աշակերտներին բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին կրթելը: Ընդ որում, դա պետք է իրականացվի պարբերաբար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև անհատական զրույցների միջոցով: Այդպիսի հանդիպումների ընթացքում աշակերտներին մատչելի ձևով պետք է բացատրվի անձնական հիգիենայի կանոնները և դրանց չհետևելու արդյունքում հնարավոր բացասական ազդեցության հետևանքները: Այդպիսի իրազեկման միջոցառումները երեխաներին կօգնեն

պահպանել սանիտարահիգիենիկ նորմերը, խուսափել վնասակար սովորություններից և ցուցաբերել ամենօրյա հոգածություն իրենց առողջության նկատմամբ:

Հարկ է նշել նաև, որ հաստատություններում իրականացված հարցումների արդյունքում արձանագրվել է, որ հաստատության անձնակազմը պատշաճ կերպով իրազեկված չէ շահագործվող հաստատությունների կառուցվածքին, սենքերին, գույքին և սարքավորումներին ներկայացվող հիգիենիկ պահանջների և դրանց չկիրառման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների մասին:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև կրթական համակարգերի միջոցով իրականացնել իրազեկման աշխատանքներ ուսումնական հաստատությունների աշակերտողների, վերջիններիս ծնողների շրջանում ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ,

2. անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել հաստատությունների անձնակազմի շրջանում օրենսդրական պահանջների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ,

3. անհրաժեշտ է հաստատություններում երեխաների համար տեղադրել իրազեկող և մատչելի պաստառներ սանիտացիայի և հիգիենայի վերաբերյալ:

2.5 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԶՐԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԻՄՔ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է սովորողների առողջության պահպանումը՝ որպես հանրակրթության սկզբունք: Ըստ հիշյալ հոդվածի՝ ուսումնական հաստատությունն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

Ըստ նույն օրենքի 35-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: Ի դեպ, կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները, որոնք ունեն ծայնի և խոսքի, լսողական, տեսողական ինտելեկտուալ (մտավոր) շարժողական ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված

Ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետությունում մանկապարտեզները և դպրոցները ֆինանսավորվում են պետական միջոցների հաշվին՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով: Այսպես, կրթական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշմամբ⁶⁷ սահմանված կարգով:

Ըստ հիշյալ որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է ըստ սովորողների թվի՝ սովորողների թիվը բազմապատկելով կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող որոշակի գումարով՝ նախատեսելով նաև հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումար:

Այսինքն, ըստ ֆինանսավորման կիրառվող կարգի՝ հանրակրթական ուսումնական հաստատության ֆինանսավորման չափն ուղիղ համեմատական է դրանում սովորող աշակերտների թվին:

Կառավարության հիշյալ որոշման Հավելվածով սահմանված է Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգ: Ըստ հիշյալ կարգի առաջին կետի՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը, Հայաստանի Հանրապետության մարզպետները (Երևանի քաղաքապետը) Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումից հետո մեկ ամսվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում, իրենց ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարում են վերաբաշխումներ:

Նույն կարգի 2-րդ կետի համաձայն՝ վերաբաշխումներ կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության այն պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների մասով, որոնց ծախսերն ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի կիրառման արդյունքում մեկ սովորողի հաշվով աճել են ավելի մեծ կամ նվազ չափով, քան տվյալ կառավարման մարմնի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական

⁶⁷ Ընդունվել է 24 օգոստոսի 2006 թվական, ուժի մեջ է 01.01.2007թ.,

հաստատությունների մեկ սովորողի հաշվով ընդհանուր միջին աճն է՝ նախորդ տարվա համեմատ:

Մինչդեռ, ինչպես նկատելի է, որ վերաբաշխում իրականացնելը պետական մարմնի հայեցողություն է, որը պայմանավորված է կոնկրետ ուսումնական հաստատությունում կիրառվելիք բանաձևի արդյունքում մեկ սովորողի հաշվով ծախսերի՝ տվյալ կառավարման մարմնի (օրինակ՝ կոնկրետ մարզպետարանի) ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների մեկ սովորողի ընդհանուր միջին աճով: Նշվածը չի կարող բավարար լծակներ ստեղծել տարբեր մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համահարթեցման համար:

Նշված խնդիրն է հենց վկայակոչվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից իրականացված ՀՀ մարզային ենթակայության տակ գտնվող դպրոցների ֆինանսական գործունեության վերլուծությամբ, ինչի արդյունքում արձանագրվել է, որ փոքր քանակով աշակերտներ ունեցող դպրոցներում (մինչև 100 աշակերտ) ֆինանսավորումն ըստ բանաձևի չի բավականացնում դպրոցի պահպանման ծախսերի և աշխատավարձի ֆոնդի ֆինանսավորման համար, որի արդյունքում մեծ է մարզպետարանների կողմից իրականացվող բյուջեի վերաբաշխման չափը⁶⁸:

ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 11-ի համատեղ հրամանով⁶⁹ հաստատվել է 2018 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի՝

$Ըգ = Սթ \times Սգ + Պգ + ՏՍթ \times ԱՕք \times ՄՆգ + ՀՈԻՀՍթ \times 0.1 \times ՍԱդգ$, գործակիցները, հետևյալ չափերով.

Սգ՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 124000 դրամ,

Պգ՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը՝ մինչև 100 աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար՝ 19000.0 հազ. դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը): 101-ից մինչև 300 աշակերտ ու 301 և ավելի աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է 2 մասից՝ հաստատության պահպանման ծախսերից՝ 2844.0 հազ. դրամ, և ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից, որը հաշվարկվում է, հիմք ընդունելով սույն հրամանի 2-րդ կետում նշված՝ ոչ ուսուցչական անձնակազմի նվազագույն հաստիքների թվաքանակը:

Հրամանի 2-րդ կետի համաձայն՝ հաշվարկը կատարելիս կիրառվում են գործակիցներ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով՝ տարրական մակարդակի համար՝ 0.8097

⁶⁸ Հասանելի է <http://www.mtad.am/files/docs/1627.pdf>, էջ 39:

⁶⁹ Ընդունված է 27.12.2017թ., ուժի մեջ է 11.02.2018

գործակցով, միջին մակարդակի համար՝ 1.1255 գործակցով, ավագ մակարդակի համար՝ 1.166 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.13 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.04 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ավագ դպրոցների համար՝ 1.14 գործակցով: Աշակերտների թվաքանակից ելնելով՝ ոչ ուսուցչական անձնակազմի նվազագույն հաստիքների թվաքանակը կազմում է՝ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 7.5, 101-ից մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 9.5, 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 13.0:

Հրամանի 3-րդ կետի համաձայն՝ որպես հաստատության սովորողների թիվ՝ Սթ, ընդունվում է աշակերտների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին, հաշվի առնելով դասարանների փաստացի կոմպլեկտավորումը, ՏՍԹ՝ հաստատություններում տարրական դասարաններում սովորողների և նախակրթարանների երեխաների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին, ՀՈՒՀՍԹ՝ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների (բացառությամբ տարրական դասարանների և սահմանամերձ համայնքների 5-12-րդ դասարանների) թիվն ուսումնական տարվա սկզբին:

Այսպիսով, ինչպես նկատելի է, որ դպրոցների ֆինանսավորման բանաձևի առանցքային փոփոխականը դպրոցում սովորող աշակերտների թիվն է: Ներկայիս բանաձևը չի ապահովում փոքր, թերկոմպլեկտավորված դպրոցների նվազագույն կարիքներին համապատասխան ֆինանսավորում: Հիմք ընդունելով տվյալ որոշումը՝ ՀՀ ֆինանսների նախարարը և կրթության և գիտության նախարարը ամեն տարի ստորագրում են համատեղ հրաման ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին: Ներկայում քննարկման փուլում է ֆինանսավորման նոր բանաձևը, որի համաձայն առաջարկվում է դպրոցների ֆինանսավորման բանաձևում նախատեսել նաև նոր փոփոխական՝ դասարանների թիվը: Նախատեսվում է նաև վերացնել գումարների վերաբաշխման հնարավորությունը և սահմանել ուսուցչի նվազագույն աշխատավարձ⁷⁰:

Ներկայում ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է հիշյալ որոշման մեջ կատարել փոփոխություններ:

⁷⁰ Այդ մասին տե՛ս Դպրոցների ֆինանսական գործունեության մշտադիտարկման արդյունքների զեկույց 2017թ. Հասանելի է <https://transparency.am/files/publications/1510654258-0-538483.pdf>, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից իրականացված ՀՀ մարզային ենթակայության տակ գտնվող դպրոցների ֆինանսական գործունեության վերլուծություն, հասանելի է <http://www.mtad.am/files/docs/1627.pdf> էջեր 39-40:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ գործող օրենսդրությամբ բացակայում է դպրոցների համար սահմանվող՝ տարեկան բյուջեի ծախսերի համար նախատեսվող նվազագույն գումար՝ տնտեսական գույք՝ մաքրող միջոցներ, սանիտարական գույք ձեռք բերելու համար: Հանրակրթական դպրոցների ֆինանսավորումը կարգավորող ՀՀ կառավարության որոշումները չեն բացահայտում ՀԴԾ-ի ձևավորման սկզբունքը, ինչպես նաև չեն սահմանում ջրի, սանիտարական ապրանքների և ծառայությունների համար հատկացվող գումարի նվազագույն չափ: Արդյունքում, հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենները հնարավորություն են ստանում ուսումնական հաստատության բյուջեն կազմելիս բավարար միջոցներ չուղղել սանիտարական գույք և միջոցներ ձեռք բերելու համար:

Անդրադառնալով ֆինանսական ապահովության հարցին, հարկ է նշել, որ ըստ Կրթության և գիտության նախարարության՝ հաստատություններին հատկացվող ֆինանսավորման այս կամ այն չափով հատկացումները կոնկրետ ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին ուղղելու հրամայականով որոշում կամ մշակված ռազմավարություն չկա, սակայն, Նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ հաստատություններին հատկացվող բյուջեի 0,4-ից մինչև 2 տոկոսն (չհաշված առանձին դեպքեր) ուղղվում է հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին:

Տվյալ հարցի վերաբերյալ ըստ ներկայացված հարցման անդրադարձել է նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը՝ ներկայացնելով մի շարք տվյալներ: Մասնավորապես, Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող հաստատություններին հատկացվող բյուջեի մոտ 0,3 տոկոսն է ուղղվում հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին: Արմավիրի մարզպետարանի ենթակայության նախադպրոցական հաստատություններին հատկացվող բյուջեից ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին տրամադրվել է բյուջեի 0,5-1 տոկոսը, իսկ հանրակրթական ուսումնական հաստատությունների բյուջեից՝ 0,2-0,3 տոկոս: Լոռու մարզի ենթակայության ուսումնական հաստատությունների պարագայում հատկացումը կազմել է բյուջեի մինչև 3 տոկոս, իսկ նախադպրոցական հաստատությունների պարագայում քաղաքային համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատություններին հատկացվող բյուջեի միջին հաշվով 0.43 տոկոս, և գյուղական համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատություններին հատկացվող բյուջեի միջին հաշվով 3.4 տոկոսն ուղղվում է հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին: Կոտայքի մարզի պարագայում ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին տրամադրվող հատկացումը կազմում է բյուջեի 0.005-ից մինչև 2 տոկոսը, Շիրակի մարզի պարագայում՝ բյուջեի մոտ 0,3 տոկոսը, Տավուշի մարզի պարագայում՝ 17,9 տոկոսը: Վայոց ձորի և Արագածոտնի մարզերի պարագայում՝ հաստատություններին հատկացվող բյուջեի որևէ տոկոս չի ուղղվում հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին:

Հարկ է նշել, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ մի շարք մարզերի ենթակայությամբ գործող դպրոցներ ունեն զարգացման ծրագրեր, որոնցում հիմնականում անդրադարձ կա ջրի, կոյուղու և սանիտացիայի հարցին: Չնայած վերոգրյալին, որ դպրոցները բավականին դեպքերում ունեն ջրի, կոյուղու և սանիտացիայի հարցերի ներառմամբ զարգացման ծրագրեր, սակայն նախորդ պարբերությամբ ներկայացված տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ դպրոցին հատկացվող բյուջեից ջրի և սանիտացիայի ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների կոնկրետ համամասնությունը սահմանված չէ, ինչը, բնականաբար, արգելակելու է ջրի և սանիտացիայի հասանելիության բարելավմանն ուղղված գործունեությունը և քայլերը: Միևնույն իրավիճակն է առկա նաև Կրթության և գիտության նախարարության ենթակայության դպրոցներում, որոնցից 49-ը ունի զարգացման նախագիծ, իսկ 45-ում անդրադարձ կա ջրի և սանիտացիայի հարցին, սակայն այս պարագայում ևս կոնկրետ ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին ուղղելու հրամայականով որոշում կամ մշակված ռազմավարություն չկա:

Նմանատիպ տեղեկություն է տրամադրել նաև Երևանի քաղաքապետարանը, ըստ որի՝ քաղաքապետարանին ենթակա հաստատություններին հատկացվող ֆինանսավորման այս կամ այն չափով հատկացումները կոնկրետ ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին ուղղելու հրամայականով որոշում կամ մշակված ռազմավարություն առկա չէ:

Կարևորելով ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի իրացումը և ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք մշակել ռազմավարություն՝ կոնկրետ նշելով ֆինանսական միջոցների այն քանակը, որը պետք է անպայմանորեն ուղղվի ջրի և սանիտացիայի հասանելիության ոլորտին:


Ուստի, անհրաժեշտ է ՀԴՑ-ում նախատեսել նվազագույն գումար ուսումնական հաստատությունում հիգիենայի միջոցների ձեռքբերման համար: Նմանատիպ մոտեցում անհրաժեշտ է որդեգրել նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կարգում:

ԳԼՈՒԽ 3


ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հետազոտությունն անցկացվել է ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի 121 դպրոցում, որոնցից 81-ը եղել են քաղաքային, իսկ 40-ը՝ գյուղական:

Աղյուսակ 1
Քաղաքային և գյուղական դպրոցների տոկոսային հարաբերակցությունը



Աղյուսակ 2
Մշտադիտարկված 121 դպրոցի Բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի




3.1 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ


Դպրոցների շենքերի շուրջօրյա խմելու տնտեսական հոսող ջրով ապահովված լինելը Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններին ներկայացվող սանիտարական կանոնների և նորմերի պարտադիր պահանջ է: Սակայն հետազոտության ենթարկված 121 դպրոցից խմելու տնտեսական շուրջօրյա հոսող ջրով ապահովված են 105-ը: Նշված ցուցանիշով քաղաքային և գյուղական համայնքների տոկոսային հարաբերակցությունը, ինչպես նաև տարածվածությունը և բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Մշտադիպարկված քաղաքային և գյուղական համայնքների դպրոցների շենքերի շուրջօրյա խմելու տնտեսական հոսող ջրով ապահովվածության տոկոսային հարաբերակցությունը



Աղյուսակ 4
Մշտադիտարկված դպրոցների շենքերի շուրջօրյա խմելու փնտեսական հոսող ջրով ապահովվածության փոկոսային հարաբերակցությունը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի




Այս պարագայում առանձնանում է Արարատի մարզը, որտեղ դպրոցների 75%-ն ապահովված չէ շուրջօրյա ջրամատակարարմամբ, իսկ Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի,

Վայոց Ձորի մարզեր շուրջօրյա ջրամատակարարում չունեցող դպրոցների քանակը կազմում է 20-25 %:

3.2 ԶՐԱՀԵՌԱՑՈՒՄ. ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑ


